Azg
armenian daily

24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997 ՈՒՐԲԱԹ # 204 (1458)

Ադրբեջանի արտգործնախարարը պահանջել է դատապարտել ռուս-հայկական պայմանագիրը

ՔԻՇՆԵՎ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԱՊՀ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի հոկտեմբերի 22-ի նիստում Ադրբեջանի ԱԳՆ ղեկավար Հասան Հասանովը պահանջել է դատապարտել Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքված բարեկամության եւ համագործակցության պայմանագիրը, այն անվանելով ռազմական պայմանագիր:

«Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, Հայաստանի ԱԳՆ ղեկավար Ալեքսանդր Արզումանյանը բողոք է հայտնել, հայտարարելով, որ ինքնիշխան Հայաստանի երկկողմ պայմանագիրը ոչ ոք իրավունք չունի այդպես գնահատելու: Ծայր առած սկանդալը միայն խորհրդի նախագահ Եվգենի Պրիմակովի ջանքերի շնորհիվ է հանդարտվել: Ընդսմին, Ե. Պրիմակովը ցավով նշել է, որ փորձեր են արվում նվազեցնելու Ռուսաստանի որպես դարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդի դերը: Իսկ Ադրբեջանի առաջարկության մասին որոշվել է տեղեկացնել ԱՊՀ պետությունների ղեկավարներին:

ՔԻՇՆԵՎ

Բ. Ելցին. «Միասնական եւ անբաժան Մոլդովա, Վրաստան եւ Ադրբեջան»

ՔԻՇՆԵՎ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների գագաթաժողովում ՌԴ նախագահ Բորիս Ելցինը համաձայնել է, որ Ռուսաստանն է մեղավոր ԱՊՀ-ի ծախողումներում եւ ընդգծել է, որ ԱՊՀ-ն վերակառուցման կարիք ունի: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման համաձայն, նա ընդունել է իր երկրի մեղքի բաժինը Սերձդնեստրի, Աբխազիայի եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտություններում: Արտահայտելով բոլոր նախագահների կարծիքը, Ելցինը նշել է, որ պետք է վերանայել ԱՊՀ աշխատանքային ոճը եւ ընդամենը կատարել այն, ինչը որոշված է: Ըստ մեկնաբանների, Քիշնեւի գագաթաժողովը պետք է դառնա այն մեկնակետը, որից պիտի սկսվի ԱՊՀ-ի «վերակառուցումը»:

Մեծ տարածություններ առաջացրեց առճակատումներով զբաղվող ԱՊՀ հատուկ կոմիտեի ստեղծման խնդիրը: ԱՊՀ անդամների մեծ մասը դեմ էր Ռուսաստանի նախաձեռնությանը, ըստ որի նախատեսվում էր մեծ լիազորություններով օժտել այդ կոմիտեն: Ըստ Պրիմակովի, այն պետք է ունենա որոշումներ կայացնելու եւ խաղաղապահ գործողությունները ղեկավարելու իրավունք, ինչը մերժվել է ԱՊՀ արտգործնախարարների կողմից: Փոխարենը նրանք համաձայնեցրել են աբխազական խնդրի լուծման եղանակը: Սակայն ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Սերգեյ Յաստրժեմբսկին լրագրողներին չի պարզաբանել այդ առաջարկի էությունը:

Ելցինը, անդրադառնալով ԱՊՀ տարածքում հակամարտությունների կարգավորման եղանակներին, ընդգծել է, որ Մոսկվայի դիրքորոշումը միանշանակ է, այն է միասնական եւ անբաժան Մոլդովա, Վրաստան եւ Ադրբեջան, իսկ թե ինքնավարության ինչպիսի աստիճան կտրամադրի իր այս կամ այն մասին համապատասխան պետությունը, պիտի որոշի այդ երկրի իշխանությունը: Բոլոր դեպքերում էլ դա չպետք է լինի այլ պետություն ընդգծել է Ելցինը:

ԵՐԵՎԱՆ

Մարդեյ Ուռնով. «Ոչ ոք չի պատրաստվում «ծախել» Ղարաբաղը»

Թեհեյան կենտրոնում հայտարարվեց 1998 թ. լրագրողական մրցանակների մասին

Նորաբաց Թեհեյան կենտրոնի «Լ. Գազանճյան» դահլիճում երեկ հայտարարվեց ՄԱԿ-ի կողմից 1998 թ.-ի համար սահմանված լրագրողական մրցանակների մասին: Հանդիպումը, որին ներկա 4 տասնյակ լրագրողներից բացի ներկա էին նաեւ ՄԱԿ-ի ՀՏԲ-ի ներկայացուցիչ տիկին Էնկու Կեբեդեն, Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Ուռնովը, Մ. Նահանգների դեսպան Պիտեր Թոմսենը, Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան եւ Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոն, ներածական խոսքով բացեց Մամուլի ազգային ակումբի նախագահ Նարինե Մկրտչյանը: Այնուհետեւ տիկին Կեբեդեն եւ Ֆրանսիայի դեսպանը հայտարարեցին մամուլի մրցույթի մասին՝ հիմնված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի «կանխարգելիչ լրագրություն» կոչվող նոր գաղափարի վրա:

Չնայած այդ գաղափարն արդեն լայնորեն օգտագործվում է արեւմտյան երկրներում, անցման փուլում գտնվող երկրներին օգտակար կլիներ զարգացնել «կանխարգելիչ լրագրության» համար անհրաժեշտ պահանջներն ու պարտականությունները: Այս նկատառումով, Ֆրանսիական դեսպանատունն ու ՄԱԿ-ի ՀՏԲ-ն միասին հայտարարեցին 1998 թ. ՄԱԿ-ի ՀՏԲ-ի Մամուլի մրցանակը: 1998 թ. մրցանակը կտրվի այն լրագրողին, որը զգոն է պահել հասարակությանը հրատապ հարցերի վերաբերյալ, եւ որի աշխատանքը արդյունավետ է թե՛ ժողովրդին եւ թե՛ լրագրությանը:



Մրցանակակիրն ընտրվելու եւ հայտնի է դառնալու մայիսի 3-ին, Մամուլի ազատության համաշխարհային օրը: Հոդվածները ներկայացնում են Ֆրանսիական դեսպանատան եւ ՄԱԿ-ի ՀՏԲ-ի աշխատակիցները: Իրականում հաղթողին կորոշի հասարակությունը: Մասնակցելու են հրավիրվում լրագրողներ եւ խմբագիրներ: Հայերեն կամ ռուսերեն գրված հոդվածները պետք է ներկայացնել ՄԱԿ-ի ՀՏԲ-ի գրասենյակ 1998 թ. ապրիլի 15-ից ոչ ուշ: Մրցանակը կկազմի 1000 ամերիկյան դոլար:

Տես էջ 2

Ուզբեկստանի վարչապետը դեմ է հոբելյանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո նշելուն

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ինչպես հայտնի է, Փարիզում իր աշխատանքն է սկսել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերանսը, որտեղ, ըստ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչության տեղեկատվության, Ուզբեկստանի փոխվարչապետ Ա. Ազիզխոջաեւը իր ելույթում մասնավորապես ասել է հետեւյալը. «...Ցավոք, պետք է նշեմ, որ ոմանք, մասնավորապես մեր Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, այսչափ ներկայացուցչական ամբիոնը փորձում են օգտագործել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գաղափարներին անհարիր նպատակներով: Դիցուք՝ ցանկություն է հայտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո տոնել հոբելյանները իբր թե հնամյա այնպիսի կայսրությունների, որոնց երբեմնի տարածքում այսօր կազմավորվել են մի քանի նորանկախ պետություններ: Դա կարող է ոչ միայն սրել հարաբերությունները պետությունների եւ ժողովուրդների միջեւ, այլեւ հանգեցնել տարածքային հավակնությունների եւ վնասել այսչափ ներկայացուցչական կազմակերպության հեղինակությանը: Մենք չպետք է թույլ տանք նման միտումներ»:

Աբխազիայում ռուս խաղաղարարների մանդատը երկարաձգվեց

ՔԻՇՆԵՎ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթաժողովում որոշում է ընդունվել Աբխազիայում ռուսաստանյան խաղաղարար ուժերի մանդատը երկարաձգել մինչեւ տարեվերջ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տեղեկատվության, այս մասին հաղորդվել է Համագործակցության պետությունների ղեկավարների հանդիպման արդյունքներին նվիրված մամլո ասուլիսում:

Ուկրաինայի վարչապետը Բաքու կժամանի նոյեմբերին

ԲԱԿՈՒ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԱՅՄ ՆՅՈՒՍ-ԷՄ ՓԻ ԷՅ: Ուկրաինայի վարչապետ Վալերի Պուստովոյտենկոյի այցն Ադրբեջան կկայանա նոյեմբերի սկզբներին: Այցի ընթացքում ուկրաինական կառավարության ղեկավարը կբարունակի քննարկել եւ հավանաբար կստորագրի մի շարք համաձայնագրեր, որոնք նախապատրաստել է Ադրբեջանի առաջին փոխվարչապետ Աբաս Աբասովի եւ Ուկրաինայի պետնախարար Անատոլի Մինչենկոյի գլխավորած տնտեսական համագործակցության երկկողմ հանձնաժողովը: Հանդիպման ժամանակ գլխավորներից մեկը կլինի որոշ հանքավայրերից Ուկրաինայի տարածքով ադրբեջանական նավթահումքի փոխադրման հարցը:

Ռոխլինը մեղքը գցում է լրագրողների վրա

ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի Պետդումայի պատգամավորության հանձնախմբի նախագահ Լեւ Ռոխլինը հրավիրել է ռազմական գլխավոր դատախազություն՝ բացատրություններ տալու «1998 թվականի գարնանը ատելի վարչակարգը տապալելու» իր հայտարարությունների առնչությամբ: Ինչպես հաղորդում է Ռուսաստանի «Նովոստի» լրատվական գործակալությունը, գեներալ Ռոխլինը հայտարարել է, թե իր արտահայտությունները թղթակիցներն աղավաղել են եւ այդ պատճառով իրականությանը չեն համապատասխանում: Դրա հետ մեկտեղ նա ընդգծել է, որ իր կազմակերպությունը՝ Բանակին աջակցության շարժումը (ԲԱՇ), հետաքննում է զուտ քաղաքական նպատակներ: Ռազմական դատախազության ներկայացուցիչը Ռոխլինի ուղարկությունը հրավիրվել է այն բանի վրա, որ զինծառայողների մասնակցությունը նման հասարակական միավորումներին արգելված է զինծառայողների կարգապահության մասին ՌԴ գործող օրենսդրությամբ: Երկուշաբթի օրը, ելույթ ունենալով «Էխո Մոսկվի» ռադիոկայանի ուղիղ եթերում, Ռոխլինը չի ժխտել, որ խոսել է 1998 թվականի գարնանը ատելի վարչակարգը տապալելու ԲԱՇ-ի մտադրության մասին, սակայն պնդել է, որ իր շարժումը մտադիր է դա անել սահմանադրական ճանապարհով:

Էգեյանում ո՞վ է ում խոչընդոտել

ԱՆԿԱՐԱ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունական մի ռազմանավ հոկտեմբերի լույս 23-ի գիշերը փորձել է խոչընդոտել թուրքական սուզանավին, բայց փոխարենը հարվածել է թուրքական պարեկային նավին: Հայտարարել է Թուրքիայի զինված ուժերի հրամանատար Իսմայիլ Քարադային: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման, նա կատարվածը բնորոշել է որպես լուրջ ագրեսիա, նշելով, որ նման միջադեպ առաջին անգամ է պատահում: Նշվում է, որ էգեյան ծովի միջազգային հատվածում տեղի ունեցած այս միջադեպում տուժածներ չկան: Հունաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչն իր հերթին հայտարարել է, թե հունական ականազերծող նավը բախվել է թուրքական պարեկային նավին վերջինիս թուրք նավաստիների վտանգավոր գործողությունների պատճառով:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Դաշնության տարբերակի վերաբերյալ Գուլուզադեի հայտարարությունը Բաքվում միանշանակ չի ընդունվել

«Ամենայն հավանականությամբ Երեւանում ու Ստեփանակերտում տեղյակ չեն, որ բառացիորեն օրերս Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի արտաքին քաղաքական հարցերով պետական խորհրդատու Վաֆա Գուլուզադեն հանդես է եկել հետաքրքրաշարժ հայտարարությամբ, որի համաձայն, պատշաճական Բաքուն պատրաստ է հայկական կողմի հետ քննարկել Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ դաշնակցային հարաբերությունների հաստատման հարցը Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման պայմանով»: Այս մասին «Ազգի» թղթակցին տեղեկացրեց օրերս Երեւան ժամանած Սուսավաթ կուսակցության վարչության ներկայացուցիչ, հրապարակախոս եւ լրագրող Քյամալ Ալին: Նրա վկայությամբ, Ադրբեջանի նախագահի քաղաքական հարցերով խորհրդականի հայտարարությունը միանշանակ չընդունվեց հանրապետության քաղաքական տարբեր ուժերի կողմից: Եթե, օրինակ, Սուսավաթ կուսակցությունը վրդովմունքով ընդունեց Գուլուզադեի հայտարարությունը, ապա Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը զուսպ ընթացքով մոտեցավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ դաշնակցային կապեր հաստատելու գաղափարին:

Մեր կողմից ավելացնենք, որ ԼՂՀ պետականության հնարավոր սահմանափակման վերաբերյալ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի հայտարարությունից հետո ադրբեջանական կողմը, ըստ երեւույթին, հայտնվել է բավականին նրբանկյուն վիճակում: Չարձագանքել ղարաբաղյան իշխանությունների հերթական խաղաղ նախաձեռնությանը կնշանակեր ԵԱՀԿ ղեկավարությանը մեկ անգամ եւս ապացուցել պաշտոնական Բաքվի անզիջողականությունը ղարաբաղյան ճգնաժամի կարգավորման համատեքստում: Այդ իսկ պատճառով Ադրբեջանը, ամենայն հավանականությամբ, ստիպված եղավ արդեն գլխավոր խորհրդականի միջոցով հայտարարել Լեռնային Ղարաբաղի հետ որակական նոր հարաբերությունների հաստատման հավանականության մասին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ երկու տարի առաջ նույն Վաֆա Գուլուզադեն լսել անգամ չէր ցանկանում ադրբեջանա-ղարաբաղյան դաշնության տարբերակի մասին:

ՎԱՀՐԱՄ ԱՎԱԳՅԱՆ

ԱԶԳ

տեղական

ՄԱԿ-52

Համակարգված գործունեությանն ուղղված հանդես

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԶԾ) հայաստանյան մասնաճյուղը պատրաստել եւ հրատարակել է «Հայաստան. համագործակցված զարգացում» զեկույցը, որն առաջինն է հանրապետությունում: Այստեղ ընդգրկված են դոնորների օգնությամբ 1996 թ. իրականացված բոլոր ծրագրերը: ՄԶԾ կենտրոնական գրասենյակի պահանջով աշխատանքների տարեկան ամփոփումն այսուհետ Հայաստանում եւս, ինչպես այլ երկրներում, օրինաչափություն կդառնա՝ վերածվելով անհրաժեշտ տեղեկատվության, աշխատանքի հետագա համակարգման ու համագործակցության հիմքի:

Զեկույցը ՄԱԿ-ի սահմանած եւ բոլոր երկրների գրասենյակներում լայնորեն կիրառվող չափանիշների հիման վրա պատրաստվել է Համագործակից զարգացման վերլուծական ծրագրի խումբը: Հայաստանում 1997 թ. փետրվարից ի վեր հաստատված համակարգ-



չային տվյալների բանկն իր հերթին հավակնում է դառնալ ներկա եւ ապագա հրատապ աջակցությունների համար ինֆորմացիայի հիմնական եւ կարեւորագույն աղբյուր:

Զեկույցում հանգամանալից ներկայացված են Հայաստանի տնտեսությանը վերաբերող կարեւորագույն տվյալները: Համախառն ներքին արտադրանքի ծավալի 8,8 տոկոս (1991 թ.), ապա 52,3 տոկոս (1993 թ.) կտրուկ անկումից հետո վայրէջքի կորագիծը սկսեց նվազել, եւ երկու տարի հետո՝ 1994-ին գրանցվեց 5,4 տոկոս աճ: 1995 եւ 96 թթ. աճը համապատասխանաբար կազմեց 6,9 եւ 5,8 տոկոս: 1991-ին 100,3 տոկոս կազմող ինֆլյացիան 1994-ին հասնելով 5458 տոկոսի, 1996-ին նվազեց մինչեւ 6,8 տոկոս: 1996 թվականին, որի տվյալներին էլ անդրադարձ է կատարված զեկույցում, Հայաստան ներմուծվել են ապրանքներ Գերմանիայից (17,4 մլն դոլար), Իտալիայից (26,2 մլն դոլար), Արաբական էմիրություններից (33,4), Հարավ Աֆրիկյան Հանրապետությունից (42), Բելգիայից (49,5), Վրաստանից (51,2), Թուրքմենիայից (92,1), ԱՄՆ-ից (103,5), Ռուսաստանից (125,5), Իրանից (149,8 մլն դոլար): Փոխարենը ԱՄՆ արտահանվել է 4,4, Ուկրաինա՝ 4,9, Թուրքիա՝ 6, Վրաստան՝ 6,9, Նիդեռլանդներ՝ 8,7, Թուրքմենիա՝ 17,5, ՀԱՀ՝ 36,4, Իրան՝ 43,9, Բելգիա՝ 44,7, ՈՊ՝ 96,1 մլն դոլարի արտադրանք:

Օտարերկրյա ներդրումները 1988-96 թթ. ունեցել են հետեւյալ պատկերը. ՈՊ՝ 26 տոկոս, Իրան՝ 21 տոկոս, ԱՄՆ՝ 14 տոկոս, Ֆրանսիա՝ 4, Գերմանիա, Սիրիա, Վրաստան՝ 3-ական, Լիբանան, Բուլղարիա, Ուկրաինա՝ 2-ական տոկոս: Մնացյալ ներդրումների ընդհանուր թիվը կազմում է 20 տոկոս: Դոնորների աղյուսակը գլխավորում են Միացյալ Նահանգները, Միջազգային զարգացման կազմակերպությունը, ՄԱՀ-ը, Եվրահամայնքը, Նիդեռլանդները, Ֆրանսիան: 1996-ին օժանդակություն է հատկացվել հեռակապի, ներքին եւ արտաքին առեւտրի, արդյունաբերության, մարդկային ռեսուրսների, գյուղատնտեսության, բնական ռեսուրսների, առողջապահության, տրանսպորտի, էներգետիկայի, տնտեսության մենեջմենթի, հումանիտար օգնության, սոցիալական ոլորտի զարգացմանը:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

Սկիզբը էջ 1

Այնուամենայնիվ, ինչպես այս օրերին Հայաստանում տեղի ունեցող յուրաքանչյուր հավաք, զուտ լրագրողական նոպատակ հետապնդող հանդիպումը վերածվեց լրագրողների հետաքրքրությունը խթանող ասուլիսի, միշտ դարաբաղյան թեմայի շուրջ: Մանավանդ որ ներկա 4 դեսպաններից 3-ը ներկայացնում էին ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահության երկրները:

Առաջինը Ռուսաստանի դեսպան Անդրեյ Ուռնովը շեղվեց հանդիպման հիմնական նյութից եւ խոսեց Ղարաբաղի հիմնահարցի մասին: Նրա բնորոշմամբ հայկական մամուլը վերջին ժամանակներս չափազանցված անհանգստություն է դրսեւորում դարաբաղյան խնդրի շուրջ: «Ոչ ոք չի պատրաստվում «ծախել» Ղարաբաղը», ասաց պրն Ուռնովը, լռելյայն ակնարկելով նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի սեպտեմբերի 26-ի մամուլի ասուլիսի բուռն արձագանքները:

Իր հերթին, հարցազրույցի ընթացքում «Ազատություն» ռադիոկայանի ներկայացուցչի կողմից, դեսպան Պիտեր Թոմսենն ընդգծեց, որ դարաբաղյան հակամարտությունն ունի 3 կողմ՝ Ադրբեջան, Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ եւ հետեւաբար հակամարտության լուծման որեւէ որոշում չի կարող ընդունվել, եթե դրան համաձայն չեն հակամարտության բոլոր 3 կողմերը: Նա շեշտեց որոշում պետք է ընդունեն նրանք՝ հակամարտության կողմերը, այնինչ միջնորդների դերը սահմանափակվում է բանակցությունների համար պատասխան հարմարավետ հարթակ ապահովմամբ: Պրն Թոմսենը ոչինչ չասաց միջազգային երաշխիքների մասին, սակայն իր հերթին զգալի է, որ Հայաստանի նախագահի մամուլի ասուլիսի արձագանքները չափազանց հոռետեսական են: Նա ողջունեց հակամարտության փուլ առ փուլ լուծման հնարավորությունը իրատեսական համարելու նախագահ Տեր-Պետրոսյանի դիրքորոշումը:

Իր հերթին, վերջերս Ֆրանսիայի ու Ռուսաստանի միջեւ նկատվող «սիրային բռնկմանը» ոչ այնքան համահունչ, դեսպան Միշել Լեգրան, որ արտահայտվում էր անգլերեն, հայտարարեց, թե Ղարաբաղի հարցում Ֆրանսիան որեւէ տարաձայնություն չունի Ս. Նահանգների հետ:

Միով բանիվ, եռանախագահության անդամ երկրների դեսպանները, նախապես պայմանավորված կամ ոչ, հանդիպումն անուղղակի օգտագործեցին դարաբաղյան հարցի ներկա փուլում իրենց տեսակետները պարզելու: Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարության նկատմամբ իրենց դրական վերաբերմունքը հանդես բերելու համար:

Արտահայտվեց նաեւ Ուկրաինայի հայագետ դեսպանը, անշուշտ հայերեն: Նա ցավ հայտնեց, որ իր երկրի ու Հայաստանի լրագրողների կապերը թույլ են, նրանք միմյանց չեն ճանաչում, միմյանց հոդվածները չեն հրապարակում:

Վերջում Մամուլի ազգային ակումբի նախագահուհին փորձեց Թեհեյան կենտրոնում կայացած առաջին ասուլիսը վերադարձնել իր սկզբնական շավիղ: Նա հայտնեց, որ բացի «կանխարգելիչ լրագրության» մրցանակից, 1998 թ. մայիսի 3-ին շնորհվելու են նաեւ լրագրողական այլ մրցանակներ, որոնցից մեկը նվիրված կլինի լավագույն հարցազրույցին, մյուսը լրագրողական հետաքննությանը, իսկ երրորդը՝ պրոբլեմատիկ հարցերին: Հոդվածների ընտրությունն այս տարի կկատարվի նոր, ասիճանակարգային եղանակով: Նա հայտնեց նաեւ, որ ակումբը պատրաստվում է ստեղծել մրցանակային հիմնադրամ:

ԵՐԵՎԱՆ

Անդրեյ Ուռնով. «Ոչ ոք չի պատրաստվում «ծախել» Ղարաբաղը»

Հայաստանում նկատվում է կաթնագեղձի քաղցկեղի աճ

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կաթնագեղձի եւ կանանց սեռական օրգանների քաղցկեղի կանխարգելմանն է նվիրված հոկտեմբերի 23-ին Երեւանում կայացած կոնֆերանսը: Այն կազմակերպել էին ՀՀ առողջապահության նախարարությունը եւ ամերիկյան UMCOR բարեգործական ընկերությունը:

Այն բացեց Հայաստանում UMCOR-ի առաքելության ղեկավար Թերրի Ուոլենը: Մասնակիցներին ողջունեց հանրապետության առողջապահության նախարար Գագիկ Սամբոլցյանը:

Քննարկվող խնդրի կարեւորության մասին խոսեց Հայաստանի առաջին տիկին Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը, որը շատ բան է անում հանրապետությունում բժշկական տարբեր ծրագրերի իրականացման համար:

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկաբարձ գինեկոլոգ Մեղեա Վարդանյանն իր ելույթը նվիրեց ընտանիքի պլանավորման հարցերին ուղղված մայրության եւ մանկական մահացության նվազեցմանը:

Հավաքվածները հետաքրքրությամբ ունկնդրեցին նաեւ սոցիալական ապահովության նախարար Հրանուշ Հակոբյանին, որը մասնավորապես խոսեց կանանց առողջության ոլորտի պետական, բնակչության սոցիալական պես անապահով խավերի պաշտպանության բնագավառում բժշկական եւ սոցիալական ոլորտների համագործակցության մասին:

Հայաստանում նկատվում է կանանց կաթնագեղձի եւ սեռական օրգանների քաղցկեղի աճ, Արմենպրեսի թղթակցին ասաց հանրապետական գիտական ուռուցքաբանական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Լեւոն Սկրտչյանը: Միայն անցյալ տարի գրանցվել է այս հիվանդություններով տառապող շուրջ 1000 մարդ: Ուստի հանրապետության առողջապահությանն անհրաժեշտ է լուծել ժամանակակից ախտորոշման եւ այս հիվանդությունների համալիր բուժման (վիրաբուժության, հիմիաբուժության եւ ճառագայթաբուժության) հարցերը: Անհրաժեշտ է մշակել գիտականորեն հիմնավորված, արդյունավետ միջոցառումներ, որոնք կախնեն հիվանդացության հետագա աճը:

Մետրոյից օրական օգտվում է 80-100 հազար ուղեւոր

ԵՐԵՎԱՆ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի մետրոպոլիտենից, վերջին տվյալներով, օրական օգտվում է 80-100 հազար ուղեւոր, ասաց նրա փոխտնօրեն Վահագն Ղարագյոզյանը: Նախորդ տարիներին, նշեց նա, այլ փոխադրամիջոցների սղության հետեւանքով այդ թիվը հասնում էր 250-300 հազարի, այդ տարիներին մետրոն միակ, հուսալի փոխադրամիջոցն էր:

Այսօր այլ է պատկերը: վերգետնյա տրանսպորտը բավականին աշխուժ է, մետրոյից օգտվում են հիմնականում կենտրոնի բնակիչները: Այդ է վկայում այն փաստը, որ ամենածանրաբեռնվածները «Բարեկամություն» եւ «Երիտասարդական» կայարաններն են, որոնցից ամեն օր օգտվում է ավելի քան 15 հազար ուղեւոր, իսկ, օրինակ, «Չարբախ» կայարանով օրական երթեւեկում է ոչ ավելի, քան 1500-2000 մարդ:

Ի դեմ, ԱՊՀ անդամ, երկրների համեմատությամբ, ասաց պրն Ղարագյոզյանը, Երեւանի մետրոն աշխատում է ամենացածր ուղեվարձով: Ամեն մի ուղեւորի փոխադրման ինքնարժեքը, օգոստոս ամսվա տվյալներով, 70-75 դրամ է, իսկ ուղեվարձը, ինչպես հայտնի է՝ 40 դրամ, տարբերությունը փոխհատուցվում է պետության կողմից:

Ինչ վերաբերում է ուղեվարձի արժեքի բարձրացմանը, որը կատարվում է միայն կառավարության որոշմամբ, դեռեւս խոսակցություններ չկան, բայց էլեկտրաէներգիայի սակագնի ավելացումը ենթադրում է նաեւ մետրոյի արժեքի թանկացում, եթե պետությունը չփոխհատուցի:

Հոգեկանը՝ երկրորդական՞ն

Մեր ադրած վերջին տարիների ցնցումների, բնական ու քաղաքական աղետների, պատերազմական իրավիճակների ազդեցությունը ֆիզ չէ՝ զգալու համար հոգեբանական ծառայությունների անհրաժեշտությունը:

Հոգեբանական ծառայությունների հարց այսօր պետականորեն դրված չէ: Գոյություն չունի օրենք՝ հոգեբուժության մասին: Թվում է՝ երկրորդական խնդիր է հոգսաբաս պետության համար: Անհաս հոգեբանների դիմող մարդկանց թիվը մսահոգում է միայն հոգեբաններին, որոնց հաջողվում է աշխատել նրանց մի փոքր մասի հետ:

Հոգեբան, Օքսֆորդի համալսարանի դոկտոր, Երեւանի բժշկական համալսարանի հոգեբանության կուրսի վարիչ Խաչիկ Գասպարյանը նշում է, որ այսօր հատկապես երիտասարդությունը հայտնվել է հոգեբանական շատ լուրջ վիճակում: «Երիտասարդները ունեն կյանքի իմաստի կորուստ, շատերը չեն տեսնում իրենց ապագան Հայաստանում: Ցավալի է, բայց ֆիզ չեն նրանք, որ դիմում են ինքնասպանության լուրջ մտքերով: Հոգեբանական պրոբլեմներին չդիմանալով՝ մարդիկ ձեռք են բերում մարմնական հիվանդություններ: Կարծում եմ՝ համաճարակների դեմ պայքարից ֆիզ կարեւոր չէ հոգեբանության մասին մտածելը»:

Վերջերս Հայաստանում առաջին անգամ նշվեց հոգեկան առողջության միջազգային օրը: Կազմակերպել էին «Բժիշկների երիտասարդական միությունը», «Աստղիկ» հասմանդամների միությունը, «Հայաստանի հոգեբույժների ասոցիացիան» եւ «Հոգեկան առողջության ֆոնդը»: Հրավիրված նախարարություններից ոչ ոք չէր ներկայացել:

ՄԵՏԱՔՍԵԼ ԴԵՎԼԻՆՅԱՆ

Սկզբունքային հայրիկը

Մի ընտանիքի հայր խիստ սկզբունքային էր. խոսքը՝ խո՛սք, գործը՝ գո՛րծ:

Ամեն առավոտ տնից դուրս գալիս, շեմից հետ շրջվելով, իր տվայլուկ երեխաներին ասում էր.

– Հաց չտպասե՛ք: Կարող է բերեմ, կարող է չբերեմ: Ես ավելորդ խոսքեր չե՛մ տալիս:

Մի օր էլ եկավ, երեխաները չկային:

– Կնի՛կ, – ասաց, – մեր երեխաներն ո՞ւր են:

– Մեր երեխաները գնացին հաց մուրալու՝ Ամերիկա, Ռուսաստան, Գերմանիա, Չեխիա, Վրաստան, Ադրբեջան...

ՋՈՒԱՆՇԻՐ ԽԱԼԱՓՅԱՆ

ՍԱՄՈՒԼ

«Անկախությունը» 10 տարեկան է

10 տարի առաջ՝ հոկտեմբերի 24-ին, երբ, չնայած ԽՍՀՄ-ում սկսված «ժողովրդավարական հալոցքին», կոմունիստական գերտերությունն անխոցելի ամրոց էր թվում, երբ այլախոհությունն ընկալվում էր որպես հիվանդագին շեղում ընդունված նորմերից եւ պատժվում մեկուսարաններում, անգամ հոգեբուժարաններում, Երեւանում լույս տեսավ առաջին անկախ (գոնե կոմունիստական իշխանություններից) պարբերականը՝ «Անկախություն» շաբաթաթերթը, որպես Ազգային միացյալ կուսակցության իրավահաջորդի՝ Ազգային ինքնորոշում միավորման պաշտոնաթերթ:

Թերթի առաջին համարը, որ ավելի շուտ թռուցիկ էր հիշեցնում, ազդարարում է կոմկուսից տարբեր առաջին հայաստանյան քաղաքական կազմակերպության նոպատակը (ազգային պետականության վերականգնում), առաջնահերթ խնդիրը (Խորհրդային Հայաստանի անկախացում), եւ հավատամքը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավատական ուժի մեջ է»: (Ցավոք, վերջինս ավելի բարդ խնդիր



դուրս եկավ, քան նախորդ երկուսը, եւ ի դեմ, ոչ առանց ԻՄ նախագահի օգնության, թեեւ հուսով ենք, որ ճգնաժամային պահին՝ այն է, Արցախի դատի պաշտպանության հարցում հավատական ուժն, այնուամենայնիվ, կձեւավորվի):

«Անկախություն 1»-ում ընդամենը երկու հրապարակում կա, երկուսի հեղինակն էլ Պարույր Հայրիկյանն է, որի կարծիքով, թերթի դերը բացառիկ էր՝ մարդկանց մեջ եղած վախը, «անկախության սարսափը» հաղթահարելու, իր ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու, սեփական ուժերի նկատմամբ հավատ ներշնչելու գործում: «Տասնամյակներ տեւած եղեռնի հետեւանքների վերացում, հայկական հարցի լուծում, շրջակա միջավայրի, կենսոլորտի պաշտպանություն՝ ահա այն խնդիրները, որ պետք է համախմբեն ազգային բոլոր հոսանքները, անկախ քաղաքական եւ կրոնական հայացքներից, բարոյական սկզբունքներից եւ կուսակցական պատկանելությունից, հռչակում է թերթը՝ առաջարկելով «թշնամափնտրությունը» փոխարինել բարեկամների եւ դաշնակիցների որոնումներով, մերժել «հավերժական թշնամիներ եւ հավերժական բարեկամներ» սկզբունքը (թեեւ մշտական դաշնակիցներ, այնուամենայնիվ, երեւի թե կան՝ դատելով «ի շրջանս յուր» (Ռուսաստանի գիրկը) Հայաստանի սրընթաց վերադարձից:

Շնորհավորելով հոբելյարին («Անկախություն» պարբերականին, որ այժմ լույս է տեսնում ընդամենը շրջաբերականների տեսքով), թերթին նույնպես վերադարձ ենք մաղթում իր երբեմնի ռիթմին եւ պարբերականությանը, մանավանդ, «Անկախությունն» ուներ եւ, կարծում ենք, դեռ ունի իր կայուն ընթերցողը...

Լ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՔՍԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՄԲԱՑԻԿ

ՔԱՐՈՇՅԱԿԱՆ

Թուրքական «բաղդ» դիվանագիտությունը

Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը եւ նրա քարոզչական ապարատը, Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակի նախաշեմին, խոստանալով «բացել» մինչ օրս գաղտնի արխիվային փաստաթղթերը եւ ներկայանալ որպես աշխարհիկ եւ ժողովրդավար երկիր, միեւնույն ժամանակ չի կարողանում դեմ դուրս գալ սեփական էությանը՝ շարունակելով հավատարիմ մնալ վաղուց որդեգրած սադրիչ գործելակերպին: Պանթուրքիզմը, որպես այլընտրանք չդիահանջող միակ գաղափարախոսություն, եղել եւ մնում է Հանրապետական Թուրքիայի քաղաքականության հիմք՝ հաճախ ձեռք բերելով բացարձակ ցինիզմի հասնող դրսեւորումներ: Հետաքրքիր է, որ «բովանդակ աշխարհը» այս առումով, կարծես թե, չի փոխել իր հայացքի անտարբերության աստիճանը, եթե միայն կույր չէ... Նման քաղաքության ներկայիս փուլը արդեն բնութագրվում է զարմանալի բազմաթափանցությամբ եւ նույնիսկ կենցաղային մակարդակներով մուտք է գործում տարբեր երկրներ՝ շուկա:

Մասնավորապես ԱՊՀ երկրների եւ գլխավորապես Ռուսաստանի ներքին շուկայում այսօր լայն շրջանառության մեջ է «Ալթայ» անունը կրող շոկոլադի սալիկը, որի տուփի երկու կողմերում պատկերված է Մասիս լեռը տարբեր դիրքերից: Երեսին կարելի է տեսնել լեռը Երեւանի Ծիծեռնակաբերդի բլուրից, իսկ հետեւի կողմում նույն Մասիսը Խոր Վիրաբի, Հռիփսիմե եկեղեցիների եւ Արարատյան դաշտի կենտրոնական հատվածի ֆոնին:

Ավելորդ չէ նշել, որ «Ալթայ» հասկացությունը Թուրքիայում միշտ էլ ընկալվել է պանթուրքիզմի գաղափարախոսության համատեքստում, որպես հայտնի խորհրդանիշ:

Շոկոլադի սալիկի տուփի վրա հնարավոր չէ նշմարել թուրքերեն ոչ մի բառ, եւ առաջին տպավորությամբ՝ «Ալթայը» կարծես թե զուտ ռուսաստանյան արտադրանք է: Ավելին, առեւտրական (ապրանքային) ծածկագիրը նույն ռուսաստանյան կողն է: Ռուսերեն է գրված նաեւ, որ «Ալթայ» շոկոլադը արտադրվում է՝ VBC Ֆաբրիկայի հեռ համատեղ «Սոյուզգինտորգ» բաժնետիրական ընկերության պատվերով: VBC հատվածը նույնպես գրված է ռուսերեն, իբր թե ռուսական ֆաբրիկա է: Բոլորովին էլ անհրաժեշտ չի լինել համտեսող, որպեսզի «Ալթայը» «մարսելուց» հետո հայտնաբերես արտադրանքի՝ ոչ ռուսական բնույթը: Բացի այդ, Մոսկվայում դժվար թե հենց այսպես, միանգամից, անտեսելով ամեն պատմական եւ աշխարհագրական իրողություն, ինչպես նաեւ տարրական կրթվածություն, հնարավոր լիներ անաղմուկ սկսել նման ապորակ (ամեն առումով եւ ձեւով) արտադրություն:

Իրականում VBC ֆաբրիկան թուրքական ձեռնարկություն է, որը իրոք արտադրում է շոկոլադի սալիկներ: Նա գտնվում է Սամբուլ քաղաքում Մուսաֆա Քյուրդողլու փողոցի թիվ 5 շենքում: Իր արտադրանքը հիմնականում առաքում է նախկին խորհրդային երկրներ: Հայաստանում առավել հայտնի է Lady շոկոլադի սալիկներով: Այս դեպքում Lady-ի տուփի վրա արդեն թուրքական ծածկագիրն է: Ըստ էության սա նույն «Ալթայն» է: Տարբեր է միայն բովանդակությունը, եթե առաջինը հասցեագրվում է միասին հայաստանցու սամոխին, ապա «Ալթայը» ավելի լուրջ ձեռնարկություն է: դա քաղաքության միջոց է հասցեագրված ողջ աշխարհին: Ընդգծված կերպով հողարկվելով ռուսերեն տառերով, այն փորձում է ձեւավորել հասարակական կարծիք եւ, կրկնենք, համոզել աշխարհի հանրությանը Օսմանյան կայսրության 700-ամյակը միջազգայնորեն նշելու նպատակահարմարությունը:

«Ալթայը» վերջերս մուտք է գործել նաեւ հայրենական շուկա, որտեղ մեր հայրենակից գործակատարը հանգիստ ու վստահ վաճառում է այդ արտադրանքը:

Երեւի թե, գոնե տվյալ դեպքում, անհրաժեշտ է ցուցաբերել ազգային պետական մոտեցում եւ թույլ չտալ ռուս-հայկական հարաբերությունների վատթարացում հենց կենցաղային մակարդակում: «Ալթայը» ծրագրված է նաեւ այս ուղղությամբ:

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատաղությամբ վարակվելն այնքան էլ հեշտ չէ

Վերջին 20 տարում կատաղությամբ մահացության 6 դեպք է գրանցվել

Քաղաքացին որտե՞ղ կարող է կատաղության դեմ պատվաստում ստանալ պոլիկլինիկայո՞ւմ, հիվանդանոցո՞ւմ... Համենայնդեպս, մեզ հայտնի մի պատահարի ժամանակ քաղաքացուն, որի ձեռքը կծել էր թափառող շունը, տարածային մի քանի պոլիկլինիկաներում պատասխանել էին, թե հակակատաղության պատվաստանյութը չունեն, միաժամանակ զգուշացրել էին պատվաստանյութի անմատչելիության ու դժվարությամբ հայթայթելու մասին: (Մեկ սրվակի արժեքը 1179 դրամ է, իսկ բուժման համար անհրաժեշտ է 6 սրվակ): Քաղաքացու պատմածին ցանկացանք հավատիանալ ինքներս եւ նույն հարցումով դիմեցինք մայրաքաղաքի մի քանի պոլիկլինիկաների: Մեզ նույնպես պատասխանեցին, որ վաղուց պատվաստանյութը չեն ստացել եւ չեն էլ մտածել հայթայթելու մասին: Խորհրդային տարիներին ինքնաբերաբար ստանում էին, իսկ հիմա, թերեւս, հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության հանրապետական կենտրոնում կտան մեր հարցի ճիշտ պատասխանը:

Ասենք, որ ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ-հակահամաճարակային վարչության պետ Մանվել Մանրիկյանն անլուրջ համարեց պոլիկլինիկաներում տուժողին տրված պատասխանը, թե նման հարցերով միայն տարածային հիգիենիկ-հակահամաճարակային կայաններն են զբաղվում եւ պնդեց, որ բոլոր պոլիկլինիկաները ժամանակին պարտավոր են դիմել հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության հանրապետական կենտրոնին եւ ստանալ դեղորայքը: Ի վերջո ցանկալի էր պարզել պատրաստուկը ստանալու մեխանիզմը. պոլիկլինիկան տարածային հակահամաճարակային կայանից, իսկ տուժածն ումի՞ց... Նախապես ասենք, որ համաձայն ենք նաեւ պրն Մանրիկյանի այն պնդման հետ, որ պոլիկլինիկաները պարտավոր են ունենալ պատվաստանյութը, քանի որ նման դեպքերում քաղաքացու առաջին կողմնորոշումը լինում է պոլիկլինիկա դիմելը: Բացի այդ, կենդանիներից տուժածները բավականին մեծ թիվ են կազմում մայրաքաղաքում:

Հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության հանրապետական կենտրոնի հատուկ վտանգավոր վարակների բաժնի վարիչ Գեւորգ Թոսունյանը պարզաբանեց, որ ի տարբերություն 92-93 թվականների ճգնաժամային իրավիճակի, երբ գրեթե երեք տարի պատվաստանյութ չունեին, ներկայումս լիովին ապահովված են հակակատաղության պատվաստանյութով եւ հանրապետության, այդ թվում նաեւ Երեւանի բոլոր տարածային հակահամաճարակային հսկողության կայաններին բավարարել են դեղորայքով: Պահեստավորված պատվաստանյութի ներարկման ժամկետը մինչեւ 98 թ. հունիսն է եւ ներմուծած մեծ քանակությունից դեռեւս բավարար պաշար ունեն, որից կարող են հատկացնել պոլիկլինիկաներին կամ նրանք պետք է վերցնեն տարածային հակահամաճարակային կայաններից:

Պրն Թոսունյանը միաժամանակ նշեց, որ իրենց կենտրոնը շահագրգռվածություն չունի պատվաստանյութն անիջապես պոլիկլինիկաներին հանձնելու հարցում, որովհետեւ իրենց ստուգայցերը ցույց են տվել, որ պոլիկլինիկայում դեղի պահպանման պահանջը սառնարանում պահելը, չի ապահովվում: Սակայն դա դեռեւս չի նշանակում, որ պոլիկլինիկաներում պետք է մերժեն քաղաքացուն: Վերջինս կարող է չիմանալ, որ պատվաստանյութը անվճար տրամադրում են տարածային հակահամաճարակային կայաններից, սակայն բուժաշխատողները լավ գիտեն պատվաստանյութի տեղը եւ պարտավոր են կարվել կայանի հետ ու դեղորայքը պահանջել:

Պրն Թոսունյանն ինքն էլ հավաստեց. «Պատահում են դեպքեր, որ պոլիկլինիկաներից տարածային հակահամաճարակային կայաններ չեն հայտնում եւ տուժողին սխալում են դեղը հայթայթել»: Ապա ավելացրեց, որ օրական մեկ-երկու մարդ դիմում է իրենց պատվաստանյութ ստանալու համար: Նրանք հիմնականում հանրապետական կայանի մերձակայքում բնակվող Ավանի եւ Նորքի զանգվածների բնակիչներն են կամ էլ պոլիկլինիկաներում մերժվածները: Որոշ մարդկաց հաջողվում է պատվաստանյութ հայթայթել, մեկի ձեռքին տեսել է նաեւ դեղատնից գնված ժամկետանց պատվաստանյութ: Բաժնի վարիչը հարկ համարեց որոշ մասնագիտական բացատրություններ տալ շան կծածի վերաբերյալ, որոնց քանակը թեպետ վերջին տարիներին շատացել է, սակայն իրենց վիճակագրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, նախորդ տարում մայրաքաղաքում արձանագրված 600-650 կծվածների միայն 10-15 տոկոսն է թափառող կենդանիներից տուժել:

Նման դեպքերում տուժողին խորհուրդ չի տրվում խուճապի մատնվել, քանի որ կատաղության հիվանդությամբ վարակվելը, պարզվում է, այնքան էլ հեշտ չէ: Վտանգավոր վարակների երկարամյա մասնագետը հայտնեց, որ ընտանի կենդանիներից կատաղությամբ վարակվում են շներն ու կատուները եւ միայն այն դեպքում, երբ նրանց կատաղած կենդանի է կծել, իսկ վայրի կենդանիներից, հիմնականում, արջը, գայլը, աղվեսն ու նապաստակը: Կենդանիները բուժում չեն ստանում եւ մինչեւ 10-րդ օրը սատկում են: Վերջին 20 տարվա (67-97 թթ.) վիճակագրության համաձայն, հանրապետությունում կատաղությունից մահացել է 6 մարդ, որից 5-ը աղվեսի կծածից: Գրանցված թարմ դեպքը տեղի է ունեցել 96 թ-ին, Երեւան քաղաքում շան կծածից մահացել է 6 տարեկան երեխան: Ասենք, որ պրն Թոսունյանը միայն այս դեպքում համոզված չէ, որ երեխայի մահանալու պատճառը կատաղությունն է եղել:

Տուժելու դեպքում մասնագետի միակ խորհուրդն է շանը հսկողության տակ առնել: Կատաղած լինելու դեպքում կենդանին կծելուց 4-5 օր հետո, առավելագույնը 10 օրվա ընթացքում պետք է սատկի, որից հետո միայն տուժողին կարելի է հակակատաղության դեմ ներարկել: Բացառությամբ այն դեպքերի, երբ կծողը թափառող կենդանի է, որին հնարավոր չէ հսկողության տակ պահել եւ վերը գլխուղեղին մոտ տարածքում է գլխի, պարանոցի, դաստակի հողերի շրջանում է եւ մեծ մակերես ունի: Նման դեպքերում բուժման համար նախատեսված 6 սրվակներից ընդհատումներով մեկ կամ երկու ներարկում է կատարվում՝ սպասելով կենդանու համար ճակատագրական 10-րդ օրվան: Պրն Թոսունյանը խորհուրդ չի տալիս նաեւ ավելորդ պատվաստանյութ ընդունել, եթե վերը լուրջ վտանգ չի ներկայացնում, քանի որ այն օգտակար չէ օրգանիզմի համար:

ՍՍՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Մովսիսյանի գործունեության հանրագումարը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մովսիսյանի երեկվա մամլո ասուլիսը որեւէ հատուկ նպատակով չէր գումարվել եւ, ամենայն հավանականությամբ, միտված էր նախարարի պաշտոնում նշանակվելու տարեդարձի առթիվ հանրությանը մի յուրահատուկ հաշվետվություն ներկայացնելուն: Նախարարն իսկապես լրագրողներիս հրամցրեց բավական հանգամանալից տեղեկատվություն իր ղեկավարած բնագավառում տիրող իրավիճակի, հանգուցային հիմնախնդիրների եւ այն ծրագրերի մասին, որոնք պետք է իրականացվեն՝ առաջիկայում սայլը տեղից շարժելու, երկրում ադրանային գյուղատնտեսություն զարգացնելու համար, ինչը, իր բնորոշմամբ, առայժմ այդքիսին չէ, «փսկ-բնատնտեսական է»: Իսկ դրա համար նախ հարկ է եղել պարզել ստեղծված իրավիճակը, մշակել համապատասխան ծրագիր եւ, իհարկե, զբաղվել ընթացիկ հարցերով, որոնք էլ կազմել են նախարարի մեկնարկային գործունեության առանցքը:

Պարոն Մովսիսյանը նկատեց, թե հողի սեփականաշնորհումը, ռազմավարական առումով, ծիշտ էր. այն առաջացրել է «դրական տեղաշարժեր եւ մեր քաղաքացիների գերակշռող մեծամասնությունը դարձել է սեփականատեր», ինչը հնարավորություն է տվել «գյուղատնտեսական որոշ ծյուղերում կայունացնել իրավիճակը, իսկ որոշ ծյուղերում, հատկապես անասնագլխաքանակի ավելացման առումով, ապահովել աճի միտումներ»: Սակայն դրան զուգընթաց գյուղատնտեսության բնագավառում չեն ստեղծվել անհրաժեշտ ենթակառուցվածքներ: Հետագա մանրամասն թվային վերլուծությունից պարզ դարձավ, որ նախարարը շատ լավ գիտի իր բնագավառը, նրա հոգսերը եւ պատկերացնում է, թե ինչ եւ ինչպես պետք է անել: Նա ընդգծեց, որ այժմ հանրապետությունում կա 321 հազար մասնավոր գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, որոնցից յուրաքանչյուրին հասնող միջին հողատարածքը կազմում է 1.3 հեկտար: Այդպիսի փոքր հողատարածքների վրա, ասել էր նշել-նշել եւ հրաշք հեղ, ինչպես հասկանում եք, ժամանակակից ֆերմերային տնտեսություն զարգացնել չի կարելի: Ուստի առկում է հնարավորը «հողի շուկայի գոյացմանը» նպաստելու համար: Այս առթիվ կարեւորվեց այն հանգամանքը, որ պետության հաշվին իրականացվում է հողերի սեփականաշնորհման վկայականների տրամադրումը, իսկ Ազգային ժողովը վերջապես օրենք է ընդունել, որով գյուղացուն թույլատրվում է վաճառելու սեփականաշնորհմամբ իրեն բաժին հասած հողատարածքների ցանկացած կտորը, եւ ոչ թե ամբողջ հողը, ինչպես նախկինում էր:

Նախարարը հավաստիացրեց, որ հանրապետությունը այլեւս հացահատիկի պետական անհրաժեշտ պաշարների ստեղծման հիմնախնդիր չունի՝ մեր գյուղացիներից հացահատիկը գնվում է միջազգային շուկայի գներով, բարձրացվել են նաեւ խաղողի գնման գները եւ նախարարությունը գյուղացիներից մթերված ադրանքի դիմաց այժմ գրեթե որեւէ պարտք չունի, վճարում է անհապաղ, մեկ շաբաթվա ընթացքում, իսկ այս տարվա անցած ժամանակաընթացում կարողացել է նույնիսկ մարել նախորդ տարիներին մթերված ադրանքների դիմաց գյուղացիներին պետության ունեցած մի քանի միլիարդ դրամի պարտքը:

Խոսք գնաց ոռոգման համակարգերի զարգացման, ֆերմերային տնտեսությունների երկարաժամկետ եւ մեծագումար վարկավորման, մայրաքաղաքում եւ մարզերում գյուղատնտեսական ադրանքների մեծածախ շուկաների ստեղծման եւ այլ կարեւոր խնդիրների մասին:

Տպավորությունս այն էր, որ կառավարությունը, ի դեմս այս նախարարության, փորձում է ակտիվորեն ազդել գյուղում շուկայական հարաբերությունների զարգացման վրա, մտածում է միջազգային շուկա դուրս գալու եւ այնտեղ մրցունակ ադրանքների առաքմամբ իր տեղը նվաճելու, երկրի պահանջմունքները առավելագույնս բավարարելու մասին: Նախարարը ամենեին տրամադիր չէր մեկ տարում արվածը «վարդագույն» ներկայացնելու (իր բառն է) ավելին, գտնում էր, թե տարի առաջ «առաջին երկրոտ քայլերն են»: Սակայն գործունեության նկատմամբ այս իրատեսական մոտեցումը հույս է ներշնչում, թե երկար ժամանակ չի պահանջվի առավել համարձակ քայլերի դրսեւորելու համար:

ԱՌԱՔԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՑԱԽ

Արցախ

ՀՀ նախագահի սեպտեմբերի 26-ի մամուլի ասուլիսի դրույթները, չնայած դեռ երկար ժամանակ կպահանջեն ասվածի բոլոր նրբին ծալքերը բացահայտելու համար, այնուհանդերձ ակնհայտում են արցախյան թնջուկի լուծմանը կոչված ինչպես քաղաքական «վերիններին» անկարողությունը, այնպես էլ այդ դրույթները սառը ցնցուղի «էֆեկտ» ներկայացնելու եւ «մի բաժակ ջրում» փոթորիկ առաջացնելու ընդդիմադիր «վերիններին» հանձնարարությունը:

Իրականում ոչ մի սենսացիա չկա: Պարզապես Լ. Տեր-Պետրոսյանն այս անգամ ավելի անկեղծ էր: Ցրվել է հայկական ամուլ դիվանագիտության «անմեղության» մշուշը: Այն ոչ միայն հաղթողի դիրքերից անկարող եղավ պայմաններ թելադրելու, այլեւ, պարզվում է, բանակցային հենքի թյունները ԼՂՀ-ն իր անկախ պետության ճանաչման եւ ՀՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու դիմաց կասարում է հանդիպակաց քայլ պարզում է թշնամու հենասարածքները, չի արգելակում փախստականների վերադարձը եւ այլն: Այս տարբերակը մեկընդմիտ կամ պատմական տեսական ժամանակահատվածում բացառում է պատերազմի հավանականությունը:

ԼՂՀ-ի ղեկավարությունն ի սկզբանե դավանել է վերջին տարբերակը, եւ համոզված եմ, չի ընկրկի դրանից, չնայած ՀՀ նախագահի մամուլի ասուլիսից հետո, հավանաբար տեղի տալով ադրբեջանական եւ միջազգային ճնշումներին եւ ՀՀ իշխանությունների «հորդորներին», ԼՂՀ-ի նախագահը, պահի ազդեցության տակ, արտահայտվել է Ադրբեջանի հետ հարթություն: Նման փորձեր արվել էին, սակայն սեփական հայեցակետ մշակելու խնդրում միտ չէ, որ հետեւողականություն է դրսեւորվել: Ահա թե ինչու միջազգային իրադրության յուրաքանչյուր ոչ հայանպաստ փոփոխման դեպքում հայկական կողմը, «արդարացման» տեղ չունենալով, ավելի ու ավելի է կառչում փոխզիջումային տարբերակից, որը ԼՂՀ-ի հռչակման օրվանից 1991-ի սեպտեմբերի 2-ից դարձել է ժամանակավրեպ: Բանն այն է, որ հռչակելով իր անկախ պետականությունը Արցախը Հայաստանի Հանրապետությունը ծերբազատել է «հակամարտող կողմի» կարգավիճակից եւ Ադրբեջանի հետ ունեցած հաշիվներում այն դարձրել իր մենաշնորհը: Այս պայմաններում տարօրինակ է թվում նաեւ ընդդիմության առաջնորդներից մեկի Վ. Մանուկյանի այն մոտեցումը, թե «Ղարաբաղի հարցի լուծումը լինելու է փոխզիջումների միջոցով» («Այժմ», թիվ 35): Ում-ում, բայց Վ. Մանուկյանին պետք է պարզ լինի, որ փոխզիջումային գնացքն անցել է վեց տարի առաջ եւ իմաստազուրկ է ետ բերել կառամատույց:

Ինչ խոսք, ԼՂՀ անկախության հռչակումը ներազգային, գուցե ներքին խոհանոցի հիմնակարգված ստեղծում է Հայաստանի անկախության հռչակագրին հակասող պատրանք, որով կարծես թե խախտում է հռչակագրի դրույթներից մեկը հանդիսացող 1989-ի դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի միավորման մասին» համատեղ որոշումը, սակայն կարծում եմ, որ դա բավարար հիմք չէ Անդրանիկ Բուռնազյանի այն մեղադրանքների համար, թե իբր «Հայաստանի անկախության հռչակագրի դրույթների ոտնահարման հայ մտավորականների մի սվար խմբի տգեղ «գիտական» հիմնավորումները, ինչպես նաեւ դրանց արձագանքը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հակահայկական գաղափարի շահարկումները հայոց հասարակական եւ քաղաքական շրջանակներում, հիմք եղան այն ազգադավ պատվանդանի համար, որի վրա այսօրվա իշխանավորները կառուցեցին հայոց անկախ պետականության իրավական կայացման դեմ ուղղված իրենց հակապետական գործունեությունը» («Իրավունք», թիվ 39): ՍԻՄ կուսակցության խաղաքաղաքական հանձնախմբի ղեկավարի համար պետք է պարզ լինի, որ «այսօրվա իշխանությունների հակապետական գործունեությունը» կապակցված չէ ԼՂՀ պետականության հետ, որ վերջինիս հռչակումը խաղաքաղաքական զիգզագ է, միայն այս պահին, եւ ոչ վերջնական «միացումից» հրաժարման հրամայական տարածային վեճի մեջ Հայաստանը չներքաշելու պատճառով եւ հետաքրքրում է կայան առ կայան ազգային գերխնդրին հասնելու նպատակ: Չէ՞ որ խաղաքաղաքականությունը միակողմանի երթեւեկության ճանապարհ չէ, եւ մի՞թե տեսանելի չէ, որ «միացումն» այսօր ժամանակավրեպ է, մերժելի, եթե չենք ուզում բումերանգի ենթարկված ընդունել:

Մեզանում շարունակվում է ճիշտ չընկալվել «հակամարտող կողմ» հասկացությունը եւ կամաթե ակամա այն տեղափոխվում է Հայաստան-Ադրբեջան հարթակ, որտեղ առաջինը սովորաբար որակվում է զավթիչի պիտակով: Իսկ քանի որ ցանկացած բախման միջազգայնորեն «ընդունելի» լուծումը փոխզիջումային տարբերակն է, ուստի, տվյալ դեպքում, հայկական «զավթիչ» կողմը պետք է պարզի «գրավյալ» տարածքները, փոխարենը բավարարվի Արցախի անվտանգության երաշխիքների հայցողական կեցվածքով: Հիմնահարցն այս կտրվածքով դիտարկելու տեսակետից հայկական դիվանագիտությունն այլ պահանջներ էլ չի կարող ունենալ: Ուստի հարցը մեկընդմիտ պետք է տեղափոխվի իր իսկական Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության հարթակ: Նման փորձեր արվել էին, սակայն սեփական հայեցակետ մշակելու խնդրում միտ չէ, որ հետեւողականություն է դրսեւորվել: Ահա թե ինչու միջազգային իրադրության յուրաքանչյուր ոչ հայանպաստ փոփոխման դեպքում հայկական կողմը, «արդարացման» տեղ չունենալով, ավելի ու ավելի է կառչում փոխզիջումային տարբերակից, որը ԼՂՀ-ի հռչակման օրվանից 1991-ի սեպտեմբերի 2-ից դարձել է ժամանակավրեպ: Բանն այն է, որ հռչակելով իր անկախ պետականությունը Արցախը Հայաստանի Հանրապետությունը ծերբազատել է «հակամարտող կողմի» կարգավիճակից եւ Ադրբեջանի հետ ունեցած հաշիվներում այն դարձրել իր մենաշնորհը: Այս պայմաններում տարօրինակ է թվում նաեւ ընդդիմության առաջնորդներից մեկի Վ. Մանուկյանի այն մոտեցումը, թե «Ղարաբաղի հարցի լուծումը լինելու է փոխզիջումների միջոցով» («Այժմ», թիվ 35): Ում-ում, բայց Վ. Մանուկյանին պետք է պարզ լինի, որ փոխզիջումային գնացքն անցել է վեց տարի առաջ եւ իմաստազուրկ է ետ բերել կառամատույց:

Ինչ խոսք, ԼՂՀ անկախության հռչակումը ներազգային, գուցե ներքին խոհանոցի հիմնակարգված ստեղծում է Հայաստանի անկախության հռչակագրին հակասող պատրանք, որով կարծես թե խախտում է հռչակագրի դրույթներից մեկը հանդիսացող 1989-ի դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի միավորման մասին» համատեղ որոշումը, սակայն կարծում եմ, որ դա բավարար հիմք չէ Անդրանիկ Բուռնազյանի այն մեղադրանքների համար, թե իբր «Հայաստանի անկախության հռչակագրի դրույթների ոտնահարման հայ մտավորականների մի սվար խմբի տգեղ «գիտական» հիմնավորումները, ինչպես նաեւ դրանց արձագանքը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հակահայկական գաղափարի շահարկումները հայոց հասարակական եւ քաղաքական շրջանակներում, հիմք եղան այն ազգադավ պատվանդանի համար, որի վրա այսօրվա իշխանավորները կառուցեցին հայոց անկախ պետականության իրավական կայացման դեմ ուղղված իրենց հակապետական գործունեությունը» («Իրավունք», թիվ 39): ՍԻՄ կուսակցության խաղաքաղաքական հանձնախմբի ղեկավարի համար պետք է պարզ լինի, որ «այսօրվա իշխանությունների հակապետական գործունեությունը» կապակցված չէ ԼՂՀ պետականության հետ, որ վերջինիս հռչակումը խաղաքաղաքական զիգզագ է, միայն այս պահին, եւ ոչ վերջնական «միացումից» հրաժարման հրամայական տարածային վեճի մեջ Հայաստանը չներքաշելու պատճառով եւ հետաքրքրում է կայան առ կայան ազգային գերխնդրին հասնելու նպատակ: Չէ՞ որ խաղաքաղաքականությունը միակողմանի երթեւեկության ճանապարհ չէ, եւ մի՞թե տեսանելի չէ, որ «միացումն» այսօր ժամանակավրեպ է, մերժելի, եթե չենք ուզում բումերանգի ենթարկված ընդունել:

Ադրբեջանի կազմում որը դիտվել է վիճելի տարածք: Ադրբեջանական հանրապետությունը չի ճանաչվել նաեւ Ազգերի լիգայի կողմից իր հավակնած տարածքների մի մասի, նաեւ Ղարաբաղի նկատմամբ վերահսկողություն չունենալու պատճառով: Իսկ հրաժարվելով խորհրդային ժամանակաշրջանի իրավաքաղաքական ժառանգությունից, Ադրբեջանը նաեւ միջազգային իրավանորմերով է իրեն զրկել Ղարաբաղի նկատմամբ ունեցած հավակնությունից, քանի որ վերջինս հենց խորհրդային ժամանակաշրջանում է կցվել նրան, այն էլ ոչ թե միջազգայնորեն ընդունված սահմանադիր, այլ կուսակցական մարմնի կողմից: Ասել է թե՝ միջազգային իրավունքի տեսակետից Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, եւ այժմ Բաքվին

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. Սցիլլայի եւ Խարիբդայի միջեւ

ձեւավորելու համար պետք է նաեւ տարբերակային զիջումների գնա, որոնցից եւ ոչ մեկը հայանպաստ չէ, այսինքն հեռու է թե մեր առավելագույն «միացման» պահանջից եւ թե նվազագույն ԼՂՀ անկախության պահպանման հրամայականից: Այս վտանգը «չտեսնելով» Աժ նախագահը ոչ միամիտ հեռուստադիտողին ճգնում է հանգստացնել, որ ՀՀ նախագահի ներկայացրած տարբերակները ընկնելու են ոչ թե համաձայնագրի առանցքային դրույթների հիմքում «չնկատելով» բանակցային ոչ ցանկալի տարբերակ առաջադրելու պարագայում ցանկալի համաձայնագիր ստանալու անհնարինությունը: Միջազգային պրակտիկան չի ունեցել նախադեպ, երբ բանակցող կողմը ստանար ակնկալիից ավելին: Բոլոր տարբերակներով Ղարաբաղը հանձնվելու է Ադրբեջանին, իսկ հայ արտաքին քաղաքական գործունեությունն էլ ավելի ու ավելի է խճճվելու Արցախի բնակչության անվտանգության ապահովման գոյագուրկ «երաշխիքների» լաբիրինթոսում եւ ենթարկվելու դրսից պարտադրված ջրատուային: Սա է լինելու «տարբերակային» կամ «փուլային» լուծումների «այգեկութը», որին ԼՂՀ իշխանությունները վաղուց (1992-1993-ից) հակադրել են փաթեթային տարբերակը:

Չմանրանալով վերհիշենք դրանց տարբերությունը: Փուլային տարբերակը նախատեսում է «գրավյալ» տարածքներից կամ դրանց զգալի մասից արցախյան ուժերի պարտությունը, փախստականների վերադարձը, միջազգային ուժերի տեղադրումը, ապա նոր ԼՂՀ կարգավիճակի քննությունը եւ այլն: Հասկանալի է, որ հայկական ուժերի դուրսբերումից եւ փախստականների վերադարձի համար երաշխիքներ ստանալուց հետո Ադրբեջանը չի շարունակի բանակցությունները եւ հաղթողի իրավունքով կձգտի ոչ միայն չքննարկել ԼՂՀ կարգավիճակի հարցը, այլեւ հայաթափել Ղարաբաղը: Սա դանդաղ գործունեության ական է, որով, ի վերջո, կսկսվի անհայտ ելքով պատերազմ:

Փաթեթային տարբերակը հետեւյալն է: Ադրբեջան-Ղարաբաղ պատերազմում հաղթողը հայկական կողմն է: Կնքվել է զինադադար, որի շուրջը միջազգայնորեն ընդունված նորմերով պետք է ընթանան հաշտության բանակցությունները: ԼՂՀ-ն իր անկախ պետության ճանաչման եւ ՀՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու դիմաց կասարում է հանդիպակաց քայլ: պարզում է թշնամու հենասարածքները, չի արգելակում փախստականների վերադարձը եւ այլն: Այս տարբերակը մեկընդմիտ կամ պատմական տեսական ժամանակահատվածում բացառում է պատերազմի հավանականությունը:

ԼՂՀ-ի ղեկավարությունն ի սկզբանե դավանել է վերջին տարբերակը, եւ համոզված եմ, չի ընկրկի դրանից, չնայած ՀՀ նախագահի մամուլի ասուլիսից հետո, հավանաբար տեղի տալով ադրբեջանական եւ միջազգային ճնշումներին եւ ՀՀ իշխանությունների «հորդորներին», ԼՂՀ-ի նախագահը, պահի ազդեցության տակ, արտահայտվել է Ադրբեջանի հետ հարթություն: Նման փորձեր արվել էին, սակայն սեփական հայեցակետ մշակելու խնդրում միտ չէ, որ հետեւողականություն է դրսեւորվել: Ահա թե ինչու միջազգային իրադրության յուրաքանչյուր ոչ հայանպաստ փոփոխման դեպքում հայկական կողմը, «արդարացման» տեղ չունենալով, ավելի ու ավելի է կառչում փոխզիջումային տարբերակից, որը ԼՂՀ-ի հռչակման օրվանից 1991-ի սեպտեմբերի 2-ից դարձել է ժամանակավրեպ: Բանն այն է, որ հռչակելով իր անկախ պետականությունը Արցախը Հայաստանի Հանրապետությունը ծերբազատել է «հակամարտող կողմի» կարգավիճակից եւ Ադրբեջանի հետ ունեցած հաշիվներում այն դարձրել իր մենաշնորհը: Այս պայմաններում տարօրինակ է թվում նաեւ ընդդիմության առաջնորդներից մեկի Վ. Մանուկյանի այն մոտեցումը, թե «Ղարաբաղի հարցի լուծումը լինելու է փոխզիջումների միջոցով» («Այժմ», թիվ 35): Ում-ում, բայց Վ. Մանուկյանին պետք է պարզ լինի, որ փոխզիջումային գնացքն անցել է վեց տարի առաջ եւ իմաստազուրկ է ետ բերել կառամատույց:

Ինչ խոսք, ԼՂՀ անկախության հռչակումը ներազգային, գուցե ներքին խոհանոցի հիմնակարգված ստեղծում է Հայաստանի անկախության հռչակագրին հակասող պատրանք, որով կարծես թե խախտում է հռչակագրի դրույթներից մեկը հանդիսացող 1989-ի դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի միավորման մասին» համատեղ որոշումը, սակայն կարծում եմ, որ դա բավարար հիմք չէ Անդրանիկ Բուռնազյանի այն մեղադրանքների համար, թե իբր «Հայաստանի անկախության հռչակագրի դրույթների ոտնահարման հայ մտավորականների մի սվար խմբի տգեղ «գիտական» հիմնավորումները, ինչպես նաեւ դրանց արձագանքը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հակահայկական գաղափարի շահարկումները հայոց հասարակական եւ քաղաքական շրջանակներում, հիմք եղան այն ազգադավ պատվանդանի համար, որի վրա այսօրվա իշխանավորները կառուցեցին հայոց անկախ պետականության իրավական կայացման դեմ ուղղված իրենց հակապետական գործունեությունը» («Իրավունք», թիվ 39): ՍԻՄ կուսակցության խաղաքաղաքական հանձնախմբի ղեկավարի համար պետք է պարզ լինի, որ «այսօրվա իշխանությունների հակապետական գործունեությունը» կապակցված չէ ԼՂՀ պետականության հետ, որ վերջինիս հռչակումը խաղաքաղաքական զիգզագ է, միայն այս պահին, եւ ոչ վերջնական «միացումից» հրաժարման հրամայական տարածային վեճի մեջ Հայաստանը չներքաշելու պատճառով եւ հետաքրքրում է կայան առ կայան ազգային գերխնդրին հասնելու նպատակ: Չէ՞ որ խաղաքաղաքականությունը միակողմանի երթեւեկության ճանապարհ չէ, եւ մի՞թե տեսանելի չէ, որ «միացումն» այսօր ժամանակավրեպ է, մերժելի, եթե չենք ուզում բումերանգի ենթարկված ընդունել:

Ադրբեջանի կազմում որը դիտվել է վիճելի տարածք: Ադրբեջանական հանրապետությունը չի ճանաչվել նաեւ Ազգերի լիգայի կողմից իր հավակնած տարածքների մի մասի, նաեւ Ղարաբաղի նկատմամբ վերահսկողություն չունենալու պատճառով: Իսկ հրաժարվելով խորհրդային ժամանակաշրջանի իրավաքաղաքական ժառանգությունից, Ադրբեջանը նաեւ միջազգային իրավանորմերով է իրեն զրկել Ղարաբաղի նկատմամբ ունեցած հավակնությունից, քանի որ վերջինս հենց խորհրդային ժամանակաշրջանում է կցվել նրան, այն էլ ոչ թե միջազգայնորեն ընդունված սահմանադիր, այլ կուսակցական մարմնի կողմից: Ասել է թե՝ միջազգային իրավունքի տեսակետից Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, եւ այժմ Բաքվին

ձեւավորելու համար պետք է նաեւ տարբերակային զիջումների գնա, որոնցից եւ ոչ մեկը հայանպաստ չէ, այսինքն հեռու է թե մեր առավելագույն «միացման» պահանջից եւ թե նվազագույն ԼՂՀ անկախության պահպանման հրամայականից: Այս վտանգը «չտեսնելով» Աժ նախագահը ոչ միամիտ հեռուստադիտողին ճգնում է հանգստացնել, որ ՀՀ նախագահի ներկայացրած տարբերակները ընկնելու են ոչ թե համաձայնագրի առանցքային դրույթների հիմքում «չնկատելով» բանակցային ոչ ցանկալի տարբերակ առաջադրելու պարագայում ցանկալի համաձայնագիր ստանալու անհնարինությունը: Միջազգային պրակտիկան չի ունեցել նախադեպ, երբ բանակցող կողմը ստանար ակնկալիից ավելին: Բոլոր տարբերակներով Ղարաբաղը հանձնվելու է Ադրբեջանին, իսկ հայ արտաքին քաղաքական գործունեությունն էլ ավելի ու ավելի է խճճվելու Արցախի բնակչության անվտանգության ապահովման գոյագուրկ «երաշխիքների» լաբիրինթոսում եւ ենթարկվելու դրսից պարտադրված ջրատուային: Սա է լինելու «տարբերակային» կամ «փուլային» լուծումների «այգեկութը», որին ԼՂՀ իշխանությունները վաղուց (1992-1993-ից) հակադրել են փաթեթային տարբերակը:

Չմանրանալով վերհիշենք դրանց տարբերությունը: Փուլային տարբերակը նախատեսում է «գրավյալ» տարածքներից կամ դրանց զգալի մասից արցախյան ուժերի պարտությունը, փախստականների վերադարձը, միջազգային ուժերի տեղադրումը, ապա նոր ԼՂՀ կարգավիճակի քննությունը եւ այլն: Հասկանալի է, որ հայկական ուժերի դուրսբերումից եւ փախստականների վերադարձի համար երաշխիքներ ստանալուց հետո Ադրբեջանը չի շարունակի բանակցությունները եւ հաղթողի իրավունքով կձգտի ոչ միայն չքննարկել ԼՂՀ կարգավիճակի հարցը, այլեւ հայաթափել Ղարաբաղը: Սա դանդաղ գործունեության ական է, որով, ի վերջո, կսկսվի անհայտ ելքով պատերազմ:

Փաթեթային տարբերակը հետեւյալն է: Ադրբեջան-Ղարաբաղ պատերազմում հաղթողը հայկական կողմն է: Կնքվել է զինադադար, որի շուրջը միջազգայնորեն ընդունված նորմերով պետք է ընթանան հաշտության բանակցությունները: ԼՂՀ-ն իր անկախ պետության ճանաչման եւ ՀՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու դիմաց կասարում է հանդիպակաց քայլ: պարզում է թշնամու հենասարածքները, չի արգելակում փախստականների վերադարձը եւ այլն: Այս տարբերակը մեկընդմիտ կամ պատմական տեսական ժամանակահատվածում բացառում է պատերազմի հավանականությունը:

ԼՂՀ-ի ղեկավարությունն ի սկզբանե դավանել է վերջին տարբերակը, եւ համոզված եմ, չի ընկրկի դրանից, չնայած ՀՀ նախագահի մամուլի ասուլիսից հետո, հավանաբար տեղի տալով ադրբեջանական եւ միջազգային ճնշումներին եւ ՀՀ իշխանությունների «հորդորներին», ԼՂՀ-ի նախագահը, պահի ազդեցության տակ, արտահայտվել է Ադրբեջանի հետ հարթություն: Նման փորձեր արվել էին, սակայն սեփական հայեցակետ մշակելու խնդրում միտ չէ, որ հետեւողականություն է դրսեւորվել: Ահա թե ինչու միջազգային իրադրության յուրաքանչյուր ոչ հայանպաստ փոփոխման դեպքում հայկական կողմը, «արդարացման» տեղ չունենալով, ավելի ու ավելի է կառչում փոխզիջումային տարբերակից, որը ԼՂՀ-ի հռչակման օրվանից 1991-ի սեպտեմբերի 2-ից դարձել է ժամանակավրեպ: Բանն այն է, որ հռչակելով իր անկախ պետականությունը Արցախը Հայաստանի Հանրապետությունը ծերբազատել է «հակամարտող կողմի» կարգավիճակից եւ Ադրբեջանի հետ ունեցած հաշիվներում այն դարձրել իր մենաշնորհը: Այս պայմաններում տարօրինակ է թվում նաեւ ընդդիմության առաջնորդներից մեկի Վ. Մանուկյանի այն մոտեցումը, թե «Ղարաբաղի հարցի լուծումը լինելու է փոխզիջումների միջոցով» («Այժմ», թիվ 35): Ում-ում, բայց Վ. Մանուկյանին պետք է պարզ լինի, որ փոխզիջումային գնացքն անցել է վեց տարի առաջ եւ իմաստազուրկ է ետ բերել կառամատույց:

Ինչ խոսք, ԼՂՀ անկախության հռչակումը ներազգային, գուցե ներքին խոհանոցի հիմնակարգված ստեղծում է Հայաստանի անկախության հռչակագրին հակասող պատրանք, որով կարծես թե խախտում է հռչակագրի դրույթներից մեկը հանդիսացող 1989-ի դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի միավորման մասին» համատեղ որոշումը, սակայն կարծում եմ, որ դա բավարար հիմք չէ Անդրանիկ Բուռնազյանի այն մեղադրանքների համար, թե իբր «Հայաստանի անկախության հռչակագրի դրույթների ոտնահարման հայ մտավորականների մի սվար խմբի տգեղ «գիտական» հիմնավորումները, ինչպես նաեւ դրանց արձագանքը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի անկախ պետականության հակահայկական գաղափարի շահարկումները հայոց հասարակական եւ քաղաքական շրջանակներում, հիմք եղան այն ազգադավ պատվանդանի համար, որի վրա այսօրվա իշխանավորները կառուցեցին հայոց անկախ պետականության իրավական կայացման դեմ ուղղված իրենց հակապետական գործունեությունը» («Իրավունք», թիվ 39): ՍԻՄ կուսակցության խաղաքաղաքական հանձնախմբի ղեկավարի համար պետք է պարզ լինի, որ «այսօրվա իշխանությունների հակապետական գործունեությունը» կապակցված չէ ԼՂՀ պետականության հետ, որ վերջինիս հռչակումը խաղաքաղաքական զիգզագ է, միայն այս պահին, եւ ոչ վերջնական «միացումից» հրաժարման հրամայական տարածային վեճի մեջ Հայաստանը չներքաշելու պատճառով եւ հետաքրքրում է կայան առ կայան ազգային գերխնդրին հասնելու նպատակ: Չէ՞ որ խաղաքաղաքականությունը միակողմանի երթեւեկության ճանապարհ չէ, եւ մի՞թե տեսանելի չէ, որ «միացումն» այսօր ժամանակավրեպ է, մերժելի, եթե չենք ուզում բումերանգի ենթարկված ընդունել:

Ադրբեջանի կազմում որը դիտվել է վիճելի տարածք: Ադրբեջանական հանրապետությունը չի ճանաչվել նաեւ Ազգերի լիգայի կողմից իր հավակնած տարածքների մի մասի, նաեւ Ղարաբաղի նկատմամբ վերահսկողություն չունենալու պատճառով: Իսկ հրաժարվելով խորհրդային ժամանակաշրջանի իրավաքաղաքական ժառանգությունից, Ադրբեջանը նաեւ միջազգային իրավանորմերով է իրեն զրկել Ղարաբաղի նկատմամբ ունեցած հավակնությունից, քանի որ վերջինս հենց խորհրդային ժամանակաշրջանում է կցվել նրան, այն էլ ոչ թե միջազգայնորեն ընդունված սահմանադիր, այլ կուսակցական մարմնի կողմից: Ասել է թե՝ միջազգային իրավունքի տեսակետից Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, եւ այժմ Բաքվին

ԱԶԳ

Միջազգային

ՇՐՋԱՆ

«Կովկաս» նոր ամսագիր առանց հայաստանյան խմբագրության, բայց Արարատի պատկերով

Այս տարվա օգոստոսին առաջին թվով լույս է տեսել «միջազգային վերլուծական» «Կովկաս» ամսագիրը, որի գլխավոր խմբագիրը Խալլադդին Իբրահիմլին է, խմբագրության նստատեղը Բաքուն, իսկ տպագրության վայրը Թուրքիան: Ամսագիրը, որն ըստ էության վայելում է «Բրիթիշ Փեթրոլիումի» աջակցությունը, իր թղթակցական խմբագրություններն է բացել Ադրբեջանում, Վրաստանում, Դաղստանում, Կաբարդինա-Բալկարիայում, Ինգուշիայում եւ Չեչնիայում:

Ըստ վրացական խմբագրության ղեկավար Վաժա Ինասարիձեի, որը օրերս Երեւանում էր լրագրողական համաժողովին մասնակցելու նպատակով, նշեց, թե ժամանակին իրենք դիմել են Վրաստանում Հայաստանի դեսպանությանը, Երեւանում թղթակցական կետ բացելու առաջարկով, բայց մինչ օրս այս խնդրում առաջխաղացում չի գրանցվել: Նույն խնդրանքով Վաժան դիմեց նաեւ վարչապետ Ռոբերտ Քոչարյանին, նրա հետ լրագրողների ունեցած հանդիպման ժամանակ: Վարչապետը խոստացավ առաջին համարին ծանոթանալուց հետո իր կարծիքը արտահայտել:

Իհարկե, ցանկացած նոր հրատարակության առաջին համարը ուսումնասիրելիս է եւ դրական եւ բացասական կողմեր: Նախ, ամսագրի շապիկի վրա պատկերված Արարատի խորհրդանիշը արդեն իսկ նախանշում է, թե Հայաստանի մասին զոնե ինչ որ լրատվություն տպագրված կլինի: Սակայն որեւէ լրատվություն ամսագիրը չի տպագրել Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի մասին: Ամսագրի խմբագրականում նշվում է, թե հիմնական գաղափարը Թուրքիան: Ամսագիրը, որն ըստ էության վայելում է «Բրիթիշ Փեթրոլիումի» աջակցությունը, իր թղթակցական խմբագրություններն է բացել Ադրբեջանում, Վրաստանում, Դաղստանում, Կաբարդինա-Բալկարիայում, Ինգուշիայում եւ Չեչնիայում:



Ըստ վրացական խմբագրության ղեկավար Վաժա Ինասարիձեի, որը օրերս Երեւանում էր լրագրողական համաժողովին մասնակցելու նպատակով, նշեց, թե ժամանակին իրենք դիմել են Վրաստանում Հայաստանի դեսպանությանը, Երեւանում թղթակցական կետ բացելու առաջարկով, բայց մինչ օրս այս խնդրում առաջխաղացում չի գրանցվել: Նույն խնդրանքով Վաժան դիմեց նաեւ վարչապետ Ռոբերտ Քոչարյանին, նրա հետ լրագրողների ունեցած հանդիպման ժամանակ: Վարչապետը խոստացավ առաջին համարին ծանոթանալուց հետո իր կարծիքը արտահայտել:

Իհարկե, ցանկացած նոր հրատարակության առաջին համարը ուսումնասիրելիս է եւ դրական եւ բացասական կողմեր: Նախ, ամսագրի շապիկի վրա պատկերված Արարատի խորհրդանիշը արդեն իսկ նախանշում է, թե Հայաստանի մասին զոնե ինչ որ լրատվություն տպագրված կլինի: Սակայն որեւէ լրատվություն ամսագիրը չի տպագրել Հայաստանի կամ Լեռնային Ղարաբաղի մասին: Ամսագրի խմբագրականում նշվում է, թե հիմնական գաղափարը Թուրքիան: Ամսագիրը, որն ըստ էության վայելում է «Բրիթիշ Փեթրոլիումի» աջակցությունը, իր թղթակցական խմբագրություններն է բացել Ադրբեջանում, Վրաստանում, Դաղստանում, Կաբարդինա-Բալկարիայում, Ինգուշիայում եւ Չեչնիայում:

ԱԶԳ

Մշակույթ

Մարտին Միքայելյան. «Գիտական աշխատանքը թանգարանում շատ թույլ է»

Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանը մշակույթի եզակի կենտրոն է, որտեղ պահպանվում եւ ցուցադրվում են հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի եւ կերպարվեստի նմուշներ: Թանգարանը ստեղծվել է 1978 թվականին եւ գտնվում է Երեւանի հին շենքերից մեկում, որը փոքր է եւ ոչ համարավետ: Մանավանդ եթե հաշվի առնենք, որ անընդհատ համալրվում է ժամանակակից ժողովրդական վարպետների աշխատանքներով, ինչպես նաեւ անցյալի հայկական արվեստի ստեղծագործություններով: Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում մեր թղթակցի հարցազրույցը թանգարանի տնօրեն, արվեստաբան Մարտին Միքայելյանի հետ:



Տանիքը կաթում է, եւ հույս ունենք, որ մի բան կանենք: Իմ կարծիքով թանգարանի տնօրենը պետք է նախ եւ առաջ գործարար լինի, թեեւ ամենազարմանալին այն է, որ մեր երկու թանգարանների տնօրեններին համարում եմ շատ գործարար, բայց թանգարանային գործը (նույնիսկ այդ թանգարաններում), այսինքն գիտական, թանգարանագիտական աշխատանքը, տեղից չի շարժվում:

– Ինչո՞ւ:

– Շատ պարզ պատճառով. դրամ չկա. հովանավորներ չկան: Եթե որ շահութաբեր բնագավառ չլինի հովանավորելու շնորհիվ բավականաչափ լավ վիճակի մեջ է միայն Մատենադարանը: Ո՞րն է ելքը: Իմ կարծիքով պետք է փակել բոլոր այն փոքր թանգարանները, որոնք հասկանալի պատճառներով, այսինքն քարոզչական նպատակներով սունկի նման իրար հետեւից աճում էին: Այն ժամանակ Սարդարապատի թանգարանն իրեն արդարացնում էր (չնայած թանգարանի շուրջը բնակություն չկար), որովհետեւ Խորհրդային Միությունը Ինտուրիստի միջոցով զբոսաշրջիկներով ապահովում էր: Պատահական չէ, որ երբ այդ երակը կտրվեց, թանգարանի վիճակը վատթարացավ: Այսինքն, պետք է մեծ կապ լինի թանգարանի եւ այցելուների միջեւ, պատահական չէ, որ Մարինեսին դեմ էր թանգարաններին: Մարդը ճանի կա, անցյալի ժառանգությունը՝ Վ. Սուրենյանցը, Ռեմբրանտը, կա: Եթե մարդու հոգեկան, կրթական, բարոյական մակարդակը իջավ, նշանակում է «իջնում է» նաեւ Ռեմբրանտի մակարդակը: Նախ եւ առաջ, երբ թանգարան են կառուցում, պետք է նկատի ունենան մարդուն: Օրինակ, մենք տիկնիկների մեծ ցուցահանդես բացեցինք: Ամբողջ Հայաստանի տիկնիկային գործերն էին, սպասումներ ունեինք: Բայց ի՞չ էին այցելուները: Հայաստանում շատ հետաքրքիր ցուցահանդեսներ են բացվում, բայց պատշաճ ուշադրության չեն արժանանում, որը չգիտեմ ինչի հետ է կապված, բայց դրամի հետ կապ չունի: Եթե չեմ սխալվում, Հայաստանում ավելի շատ պետական թանգարան կա, քան Հունաստանում:

Պետք է թողնել մի քանի (5-7) թանգարան: Եթե ինձ հարցնեք 7-ը: Իմ կարծիքով, պետք է ազգագրական թանգարանը եւ մեր թանգարանը միացնել:

– Ո՞ր թանգարանը կփակեիք:

– Օրինակ, գրական գործիչների մի շարք թանգարաններ կարելի է միացնել գրականության թանգարանին: Անհրաժեշտ է կրճատել հաստիքները, սակայն այնպես, որ միանգամից շեշտակի սոցիալական վնաս չլինի:

– Վաղ չէ՞, չէ՞ որ այդ մարդիկ գործազուրկ կդառնան:

– Դրա մասին պետք է մտածել:

– Ի՞նչ կասեք թանգարանային աշխատանքի մասին:

–Ամեն տարի առանց հովանավորության կազմակերպել ենք մինչեւ 15 ցուցահանդես, նկատի ունեմ եւ թանգարանի ներսում, եւ դրսում: Այս տարի բացել ենք 5 ցուցահանդես:

Ունենք երկու մասնաճյուղ՝ Վարդենիսում եւ Դիլիջանում, որոնց աշխատանքը շատ ծանր է, քանի որ չկան նյութական եւ տրանսպորտային միջոցներ: Այդ մասնաճյուղերից այս տարի հրաժարվել եմ. նամակ եմ գրել նախարարությանը, բայց դեռ համապատասխան եզրակացություն չի արվել: Կարծում եմ 1998-ին մասնաճյուղերը կանցնեն մարզպետարանների հովանավորության տակ:

Ամենատխուրը, ինչ-որ չափով Լավրենտի Բարսեղյանի, Նորա Դայանի շնորհիվ Հայաստանում ձեռք էր բերվել որոշ թանգարանագիտական փորձ, բայց ես վախենում եմ, որ այս բնագավառը կարող է վերանալ: Նրանք եւ մի քանիսը թարմություն հաղորդեցին այդ բնագավառին եւ թանգարանային գործը փորձեցին գիտական հիմքերի վրա դնել: Գիտական աշխատանքը թանգարանում շատ թույլ է: Պատճա՞ռը: Չենք կարող շահագրգռել մարդկանց: Բոլոր թանգարաններում լավ հիմքի վրա է դրված ցուցահանդեսային գործը, որովհետեւ Հայաստանը դրա մեծ փորձ ունի:

Թանգարանը միայն ցուցահանդեսը չէ: Թանգարանային աշխատողի մասնագիտությունը այնքիսին է, ինչքիսին արվեստաբանինը: Բուհերում կադրեր չեն պատրաստում, որովհետեւ պահանջ չկա: Կրճատում ենք, բացի այդ մասնագետ չկա, որ ուսուցանի: Հայաստանի թանգարանային գործի ամենակարեւոր դեմքը ինձ համար մեծավաստակ արվեստաբան Ռուբեն Դրամբյանն էր, ինչպես նաեւ Մատենադարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Ազգային պատկերասրահի մի քանի աշխատողներ: Դրամբյանի եւ Արմեն Վարդանյանի նման վերականգնողը, ցավոք, աշակերտներ, հետեւորդներ չունեցան:

– Թանգարանը նաեւ գիտական հաստատություն է:

– Գիտական աշխատանքները շատ դանդաղ են ընթանում: Մեր գիտաշխատողները իրենց հնարավորությունները, փորձը կարող են ցուցադրել միայն էքսկուրսիաների եւ դասախոսությունների ժամանակ:

Ի դեպ նշեմ, որ մեր թանգարանը 1994 թվականից Եվրոպայի տեսքիլ արվեստի միության անդամ է: Կենտրոնը գտնվում է Հանովերում: Մասնակցել ենք երեք միջազգային գիտաժողովների: Վերջինը տեղի ունեցավ Թբիլիսիում եւ նվիրված էր Կովկասի տեսքիլ մշակույթին:

– Բուհերի հետ կապ կա՞, դասախոսությունների չե՞ն հրավիրում:

– Բավարար կապ չկա:

– Ի՞նչ կանեիք նյութական եւ այլ հնարավորություններ ունենալու դեպքում:

– Նախ տանիքը կվերանորոգեի, բայց եթե նման հարցերը լուծված լինեին, կընտրեի ուսանողներից մի երեք-հինգ հոգի եւ այստեղ մի երկու ամիս կոնսուլտացիայից հետո կուղարկեի համապատասխան թանգարաններ, օրինակ Փարիզի արհեստների թանգարան, բայց պայմանով, որ վերադառնան: Բացի այդ լույս կընծայեի թանգարանին արժանի մի հրատարակություն:

Ա. Ա.

Շվեյցարացիները երգում են հայերեն

«Կոմիտաս» վոկալ ատելյեն Հայաստանում նշում է իր 10-ամյակը

Հոկտեմբերի 20-ին բացառապես շվեյցարացիներից կազմված «Կոմիտաս» ատելյե-երգչախումբը իր երկրորդ եւ վերջին համերգը տվեց Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում՝ նշելով իր գոյության 10-ամյակը: Արդեն 10 տարի է, ինչ Հայաստանի հետ ոչ մի արյունակցական կապ չունեցող այս մարդիկ (պրոֆեսիոնալ երգիչներ) երգում են հայկական շարականներ, հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ «այնպիսի կարոտով, այնպիսի սիրով եւ հուզականությամբ, զարմանալիորեն հստակ առոգանությամբ, որ շատ հայկական երգչախմբեր կարող են նախանձել», ասում է խմբավար Տիգրան Հեքեքյանը: Նրանք այնպիսի ոգեշնչմամբ են երգում «Իմ հեռավոր հայրենիք»՝ կարծես թե իրոք դա իրենց հայրենիքն է: Այժմ արդեն կարելի է ասել, որ Հայաստանն իսկապես նրանց համար դարձել է երկրորդ հայրենիք:

Երգչախմբի հիմնադիր եւ ղեկավար Սիրվարդ Գազանճյանը ծնվել է Թունիսում, սովորել Երեւանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում: Այժմ ապրում է Լոզանում եւ դասավանդում Լոզանի կոնսերվատորիայում: «Դեռ 2 տարի առաջ, պատմում է Տիգրան Հեքեքյանը, երբ Ռադիոյի կամերային երգչախումբը մեկնեց Շվեյցարիա հյուրախաղերի, պետք էր տեսնել, թե ինչպիսի վերաբերմունք ցույց տվեցին շվեյցարացիները: Երգչուհիներից մեկի հայրը իր հավին ազդագիրն էր տրել: Հարցրեցի՝ հա՞յ է, տիկին Գազանճյանն ասաց՝ ոչ, պարզապես Հայաստանը շատ է սիրում»:

«Կոմիտաս» ատելյեն իր անդամների առաջարկով հոբելյանական տարին նշում է Հայաստանում՝ բարեկամների եւ ընկերների հետ: Նրանց այցելությունը այլ բնույթ էլ է կրում. 2 տոննա հագուստ եւ դեղորայք են բերել Հայաստանի մանկատների համար:

Ռ. Ե.

ԵՐԵՎԱՆ

ՀՖՆ երաժիշտներ- Լորիս Ճգնավորյան աշխատանքային վեճը նոր փուլ մտավ

Սպանդարյան շրջանի ժողդատարանում երեկ սկսվեց ՀՖՆ երաժիշտներ- Լորիս Ճգնավորյան աշխատանքային վեճի հերթական գալարը. մահստրոյի դեմ երաժիշտների հարուցած հայցի քննարկումը ժողդատավոր Է. Դանիելյանի նախագահությամբ: Հայցվորները Արտյուշա Մուրադյան, Ալբերտ Գյունաշյան, Նուշիկ Պետրոսյան, Հարություն Կիրակոսյան, Գրիգոր Ղազարյան, որ 1996 թ. ձմռանը հեռացվել էին աշխատանքից (ըստ ՀՖՆ ղեկավարության կարգազանցության համար, ըստ երաժիշտների կոլեկտիվի շահերը պաշտպանելու նպատակով արհմիութենական շարժում սկսելու պատճառով), նույն շրջանի ժողդատավորի վճռով 1997 թ. ապրիլի 21-ին վերականգնվել էին աշխատանքում: ՀՖՆ ղեկավարության գանգատ ուղղված Գերագույն դատարանի վճռաբեկ ատյանին, մերժվել էր: Այնուամենայնիվ, երաժիշտներն աշխատանքային գործունեությունը վերսկսելու ոեալ հնարավորություն չէին ստացել, իսկ հուլիսի 22-ին մահստրոյի հրամանով դարձյալ հեռացվել էին աշխատանքից այս անգամ երաժիշտների որակավորման ստուգման համար նշանակված պարտադիր ունկնդրությանը չներկայանալու պատճառաբանությամբ:

Հայցվորները, որ պահանջում են վերականգնել իրենց «ոտնահարված աշխատանքային իրավունքները», ինչպես նաեւ փոխհատուցել հարկադիր պարապուրդի ընթացքում կրած նյութական եւ բարոյական մեծագույն տուժում հն, որ հետագայում հրամանն իրավական ուժ չունի, քանզի ավելի քան 6 ամիս պակաս լինելով փորձերին մասնակցելու հնարավորությունից, իրենք չէին կարող մասնակցել վերոհիշյալ ունկնդրությանը: Բացի այդ, ըստ նրանց, խախտվել է որակավորման ստուգման մշակույթի նախարարության կողմից սահմանված կանոնադրությունը, որի համաձայն երաժիշտներն առնվազն մեկ ամիս առաջ պետք է տեղեկացվեին ունկնդրության ժամկետների մասին եւ առնվազն երկու շաբաթ առաջ ստանային նախնական բնութագրերը, ինչը չի արվել: Արտյուշա Մուրադյանը մասնավորապես ասաց, որ հետադարձ ծանուցման միջոցով միայն հուլիսի սկզբին է տեղեկացել անցկացվող մրցույթի մասին եւ ավելացրեց, որ իր մյուս «իրավազրկված» գործընկերների նման, պատրաստ է «ստուգվել» նվագախմբի փորձերին առնվազն վեց ամիս մասնակցելուց հետո, այն էլ անկողմնակալ հանձնաժողովի ներկայությամբ:

Մահստրոն, որ այս անգամ (առաջին անգամ վեճին առնչվող տեսական դասական քաղաքացիություն) ներկա էր դատաքննությանը, իր տեսակետը ներկայացնելու պատիվը զիջեց նվագախմբի իրավաբան Գ. Ներսիսյանին (եւ, ի դեպ, հրաժարվեց պատասխանել հայցվորների հարցերին): Ըստ որոշ Ճգնավորյանի, ունկնդրության ժամկետների մասին նվագախումբը տեղյակ է եղել 1996 թ. սեպտեմբերից, իսկ հունվարին հայտարարությունը փակցվել է հայտարարությունների տախտակին (սակայն հայցվորներն, ի տարբերություն մյուս երաժիշտների, աշխատանքի չեն ներկայացել հայտնի պատճառով-Լ. Պ.): Բողոքող կողմին ոչ միայն թույլ է տրվել անհատապես պատրաստվել ունկնդրությանը, այլեւ աշխատանք է առաջարկվել Երեւանի սիմֆոնիկ նվագախմբում, որ, մահստրոյի կարծիքով, հիանալի «դպրոց» կարող էր լինել կորցրած որակավորումը վերականգնելու համար: Սակայն երաժիշտները չեն օգտագործել ընձեռված հնարավորությունը, չհաշված Գրիգոր Ղազարյանին, որն, ընդունելով առաջարկված տարբերակը եւ հետագայում մասնակցելով ունկնդրությանը, տեղափոխվել է ՀՖՆ (Ղազարյանը հրաժարվել է իր հայցից-Լ. Պ.): Մահստրոն դատարանին եւ հայցվոր կողմին հիշեցրեց, որ ըստ նվագախմբի կանոնադրության, լոկոր ստեղծագործական խնդիրները լուծում է գեղարվեստական ղեկավարը, ինչպես, օրինակ, «Արարատ» մարտահրավերում է, որ 30 թատրոններից ով է մասնակցելու տվյալ խաղին: «Որեւէ մեկի հետ անձնական հաց չունեմ: Ամենատ դահլիճում է բարձր մակարդակի երաժիշտներ եւ զինվորական կարգապահություն», գտնում է մահստրոն (մինչ բողոքող կողմը համոզված է, որ ՀՖՆ ղեկավարության իրենց նկատմամբ ծայրահեղ, բացասական նախապատմադրվածությունը բացառում էր ունկնդրության անաչառությունը): Ելնելով ասվածից, որն Ճգնավորյանն առաջարկեց մերժել հայցը: Նաեւ դրամական փոխհատուցման մասով, քանի որ երաժիշտներն ստացել են պետության կողմից վճարվող աշխատավարձերը, իսկ ՀԲԸՄ տրամադրած հովանավորական գումարները բաշխվում են գեղարվեստական ղեկավարի հայեցողությամբ:

Դատը հետաձգվեց եւ կշարունակվի հաջորդ երկուշաբթի:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄՆ

Մեծարանքի երեկո ի պատիվ Արմեն Հախնազարյանի

Ամերիկահայ ճարտարագետների եւ գիտնականների ընկերակցությունը հայտնել է, որ կազմակերպում է մեծարանքի երեկո ի պատիվ հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) հիմնադիր դոկտոր Արմեն Հախնազարյանի: Այս կազմակերպությունը նպատակադրել է ուսումնասիրել հայկական ճարտարապետության անցյալը, հայտնաբերել ճարտարապետական կոթողներ արդի Հայաստանի սահմաններից դուրս եւ գիտական ուսումնասիրության արդյունքը ներկայացնել հանրությանը: Ա. Հախնազարյանը եւ նրա գործընկերները կազմակերպել են գիտական 87 արշավ դեպի պատմական Հայաստան, Իրան, Վրաստան, Հյուսիսային Կովկաս, Արեւելյան Եւրոպա եւ Միջին Արեւելք:

Կազմակերպության աշխատանքի արդյունքներն ամփոփված են ավելի քան 12 հազար տեսաերիզներում «Հայկական ճարտարապետության փաստաթղթեր» եռահատորում եւ բազմաթիվ քարտեզների ու պատմական փաստագրումների տեսքով: RAA-ի առաքելությունը արվեստի եւ գիտության միջազգային շրջանակների ուշադրությունը գրավում է ինչպես մասնագիտական, այնպես էլ քաղաքական առումով:

«Երեւան» տեղեկատվական կենտրոն

ՖՈՒՏԲՈԼ

Խմբային մրցաշարերը հասում են հասարակածը

Մի պահ «Դինամո»-«Բարսելոն» խաղից Իսպանացի Ռոբեր Գարսիան (ձախից) եւ դինամոյական Անդրեյ Գուսինը գնդակի համար պայքարում

Ֆուտբոլի եվրոպական գավաթների համար եռօրյա պայքարում ամենագրավիչը, անշուշտ, Չեմպիոնների լիգայի խաղերն են: Անցկացված տասներկու խաղերից յուրաքանչյուրը հետաքրքիր էր յուրովի եւ ֆուտբոլասերներին հաճույք պատճառող:

Առաջին խմբում իտալական «Պարմա», նկազագույն հաշվով առավելության հասնելով չեմպիոնների գավաթի նախորդ խաղարկության հաղթող Դորտմունդի «Բորուսիայի» նկատմամբ, կարողացավ նրանից առաջ անցնել մրցաշարային աղյուսակում: Երկրորդ պարտությունը կրեց «Գալաթասարայը» այս անգամ Պրահայում երեք անպատասխան գնդակ ընդունելով իր դարպասը:

Երկրորդ խմբում երկու ֆավորիտներն էլ՝ թե «Մանչեսթերը», թե «Յուվենթուսը», հաջողության հասան:

Իր երկրպագուներին շարունակում է ուրախացնել Կիեւի «Դինամոն»: Սեղեր «Բարսելոնին» խոշոր հաշվով հաղթելուց հետո ուկրաինացի ֆուտբոլիստները երրորդ խմբի միանձնյա առաջատարներ դարձան: Հիշեցնենք, որ առաջին խաղում «Դինամոն» 3-1 հաշվով հաղթել է «Էյնդհովենին» նրանց իսկ դաշտում: Իսկ երկրորդ հանդիպման ժամանակ «Նյուքասլի» հետ խաղում կիեւցիները սեփական հարկի տակ երկար ժամանակ առջեւում էին 2-0 հաշվով, եւ միայն խաղավերջում մրցակիցներին հաջողվեց հավասարեցնել հաշիվը: Գուցե շատերի համար անսպասելի՞ է նշանավոր Վալերի Լոբանովսկու տանտերի հաջողությունը:

Չորրորդ խմբում բացարձակ առաջատարը Մադրիդի «Ռեալն» է: «Թագավորական» ակումբը երրորդ անընդմեջ հաղթանակը տարավ, իսկ Պիրեյ խաղաքաղաքի «Օլիմպիակոսը» երկրորդ անգամ պարտվեց 1-5 հաշվով: Անսպասելիորեն վերջապահի դերում է հանդես գալիս «Պորտոն», որը պարտվել է բոլոր երեք խաղերում:

Հինգերորդ խմբում էլ առաջատարը երրորդ հաղթանակը տարավ, իսկ ընդերները երրորդ պարտությունը կրեցին: «Բավարիայի» հաղթանակը «Պարի Սեն Ժերմենի» նկատմամբ զարմանալի չէ, փորձ-ինչ անսպասելի է նման խոշոր հաշիվը:

Դրա փոխարեն նույն 5-1 հաշվով մրցակիցներին հաղթեց ֆրանսիական մեկ այլ թիմ «Մոնակոն»: Սա Չեմպիոնների լիգայի երրորդ տուրի երրորդ նման հաշիվն է (ավելի հաճախ չորս անգամ գրանցվեց 1-0 հաշիվը): Այժմ վերջին վեցերորդ խմբում «երկիբախություն» է: Եվ դա այն բանից հետո, երբ նախկին առաջատարը Լիսաբոնի «Սպորտինգը» իր դաշտում անսպասելի պարտություն կրեց Լեւերկուզենի «Բայերից»:

Այսպիսով, Չեմպիոնների լիգայի խմբերում մրցաշարածությունը կիսվեց: Ինչպիսի՞ն կլինի երկրորդ կեսը

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Ա.-ԼԵՎԱՅԵՆ.

Առաջին խումբ

Պարմա (Իտալիա)-
Բորուսիա (Գերմանիա)՝ 1-0
Սպարտա (Չեխիա)-
Գալաթասարայ (Թուրքիա)՝ 3-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պարմա	3	2	1	0	3-0	7
2. Բորուսիա	3	2	0	1	5-2	6
3. Սպարտա	3	1	1	1	4-4	4
4. Գալաթասարայ	3	0	0	3	0-6	0

Երկրորդ խումբ

Մանչեսթեր Յունայթեդ (Անգլիա)-
Ֆեյենորդ (Հոլանդիա)՝ 2-1
Կոպենհագեն (Սլովակիա)-
Յուվենթուս (Իտալիա)՝ 0-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մանչեսթեր	3	3	0	0	8-3	9
2. Յուվենթուս	3	2	0	1	8-4	6
3. Ֆեյենորդ	3	1	0	2	4-7	3
4. Կոպենհագեն	3	0	0	3	0-6	0

Երրորդ խումբ

Դինամո (Ուկրաինա)-
Բարսելոն (Իսպանիա)՝ 3-0
Էյնդհովեն (Հոլանդիա)-
Նյուքասլ (Անգլիա)՝ 1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դինամո	3	2	1	0	8-3	7
2. Նյուքասլ	3	1	1	1	5-5	4
3. Էյնդհովեն	3	1	1	1	4-5	4
4. Բարսելոն	3	0	1	2	4-8	1

Չորրորդ խումբ

Ռուսենբորգ (Նորվեգիա)-
Պորտո (Պորտուգալիա)՝ 2-0
Ռեալ (Իսպանիա)-
Օլիմպիակոս (Հունաստան)՝ 5-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռեալ	3	3	0	0	11-2	9
2. Ռուսենբորգ	3	2	0	1	8-5	6
3. Օլիմպիակոս	3	1	0	2	3-10	3
4. Պորտո	3	0	0	3	0-5	0

Հինգերորդ խումբ

Բեշիքթաշ (Թուրքիա)-
Գյոթեբորգ (Շվեդիա)՝ 1-0
Բավարիա (Գերմանիա)-
Պարի Սեն Ժերմեն (Ֆրանսիա)՝ 5-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բավարիա	3	3	0	0	10-2	9
2. Բեշիքթաշ	3	2	0	1	4-3	6
3. ՊՍԺ	3	1	0	2	5-8	3
4. Գյոթեբորգ	3	0	0	3	1-7	0

Վեցերորդ խումբ

Մոնակո (Ֆրանսիա)-
Լյերս (Բելգիա)՝ 5-1
Սպորտինգ (Պորտուգալիա)-
Բայեր (Գերմանիա)՝ 0-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մոնակո	3	2	0	1	9-4	6
2. Բայեր	3	2	0	1	3-4	6
3. Սպորտինգ	3	1	1	1	4-3	4
4. Լյերս	3	0	1	2	2-7	1

Ավանդականում՝ ոչ ավանդական կազմ

Հոլանդական փոքրիկ Վեյֆ ան Զեե փոքրիկ քաղաքը աշխարհին հայտնի է այնտեղ անցկացվող ավանդական շախմատային մրցաշարերով: Վերջին տարիներին դրանք բավականին ուժեղ կազմ էին ունենում: Սակայն վերջին, թվով 58-րդ մրցաշարը «սուպեր» չէր: Գլխավոր՝ «Հոոգովեն-մրցաշարում» հաղթեց պատանիների անցյալ տարվա աշխարհի չեմպիոն, գրոսմայստեր Էմիլ Սուտովսկին (Իսրայել), որը 6 հնարավորից վաստակեց 4 միավոր: Նրանցից մեկական միավորով ետ մնացին 2-3-րդ տեղերը գրաված Հուդիթ Պոլգարը (Հունգարիա) եւ Լյուկ վան Վելին (Հոլանդիա):

Չորրորդ տեղը գրավեց աշխարհի նախկին չեմպիոն, 76-ամյա Վասիլի Սմիսլովը:

Երկրորդ մրցաշարում, 9 հնարավորից վաստակելով 6,5-ական միավոր, 1-3-րդ տեղերը բաժանեցին նախկին խորհրդային չեմպիոն Լեւ Պսախիսը (Իսրայել), Լեմբիտ Օլը (Էստոնիա) եւ Յան Ոոբերսը (Ավստրալիա): Հաղթողներից կեսական միավորով ետ մնացին չորս շախմատիստներ, որոնց թվում է Հուդիթ Պոլգարի կրտսեր քույրը Սոֆիան:

Մրցեցին պատանի ձյուդոյիստները

«Դինամո» ընկերության մարզադահլիճում անցկացվեցին Նոր Զեյթուն քաղաքամասի հիմնադրման 50-ամյակին նվիրված ձյուդոյի պատանեկան մրցումներ: Երեւանը եւ հանրապետության բոլոր մարզերը ներկայացնող 1980-83 թթ. ծնված 205 մարզիկներ յոթ քաշային կարգերում որոշեցին հաղթողներին ու մրցանակակիրներին:

Ըստ քաշային կարգերի հաղթողներ դարձան Տիգրան Սահակյանը (45 կգ, Մալաթիա-Սեբաստիայի մարզադպրոց), Տիգրան Շահբազյանը (50 կգ, Գյումրի), Սուրեն Ադաջանյանը (55 կգ, Զեյթունի մարզադպրոց), Ղազարոս Գրիգորյանը (60 կգ, Զեյթունի մարզադպրոց), Հմայակ Հովհաննիսյանը (65 կգ, «Հայաստան» մարզական միություն), Վարուժան Իսրայելյանը (71 կգ, Հրազդան) եւ Վահրամ Ստեփանյանը (71 կգ-ից բարձր, ՕՀՀՈ):

Բոլոր քաշային կարգերում մրցանակակիրներ դարձած պատանի ձյուդոյիստները պարգեւատրվեցին մեդալներով, վկայագրերով, բանկարժեք նվերներով: Ընդհանրապես մրցումներն անցան բարձր մակարդակով, տոնական մթնոլորտում: Մեծ գործ էր կատարել Քանաթեռ-Զեյթուն թաղամասերանը: Մրցումներին ներկա էին թաղամաս Ռուբեն Սինոյանը, թաղամասերանի ավագանիները, դպրոցների տնօրենները, ուսուցիչները... Մրցումները բարձր մակարդակով անցկացնելու համար մեծ ջանքեր էր գործադրել հանրապետության երիտասարդական հավաքականի ավագ մարզիչ Դավիթ Խիթարյանը:

Մրցումների կազմակերպությամբ զբաղվում էին արտահայտեցին նաեւ ՀԱՕԿ-ի նախագահ, մարզաձեւի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Ալեքսան Ավետիսյանը, ՀՀ սպորտվարչության պետ Արթուր Գեւորգյանը, որոնք ներկա էին պատանի մարզիկների գոտեմարտերին:

Որոշվեց ձյուդոյի պատանեկան մրցաշարը անցկացնել ավանդաբար: Նաեւ հույս կա, որ հետագայում այն կդառնա միջազգային:

Ռ. Ա.

ՀԱՄԱՌՈՏ

Առաջին չեմպիոնները հայտնի են

Նորագավիթի սուսերամարտի մարզադպրոցում սկսվել է Հայաստանի անհատական-թիմային առաջնությունը, որին մասնակցում են Երեւանի չորս եւ Վանաձորի մեկ թիմերի 80-ից ավելի սուսերամարտիկներ:

Առաջին օրն անցկացված կանանց ճկասուսերի մրցումներում երկրորդ տարին անընդմեջ հաղթեց Աննա Ստեփանյանը: Նա նաեւ լրացրեց սպորտի վարպետի նորման: Խոցասուսերակրակիների պայքարում չեմպիոնուհու կոչումը նվաճեց Հասմիկ Նավասարդյանը:

Տղամարդկանց մրցումներում առաջինը մարտուղյակ դուրս եկան բրամարտիկները: Չեմպիոն դարձավ Սամվել Պողոսյանը: Հանրապետական առաջնությունը կավարտվի հոկտեմբերի 25-ին:

Ուժեղագույններին՝ աշխարհի առաջնության ուղեգիր

«Դինամո» ընկերության մարզադահլիճում երեկ սկսվեց ֆիբոխինգի Հայաստանի երիտասարդական առաջնությունը: Հինգ ոճի շուրջ 60 մարզիկներ, որոնք ներկայացնում են մայրաքաղաքն ու հանրապետության մարզերը, պայքարում են չեմպիոնների կոչման համար:

Առաջնությունից հետո ուժեղագույնների մասնակցությամբ կանցկացվի հավաք, որտեղ կորոշվեն ֆուլ եւ սեմի կոնտակտ ոճերի աշխարհի երիտասարդական առաջնության մեկնող մարզիկները: Աշխարհի առաջնությունը կանցկացվի հաջորդ ամիս, Լեհաստանի Գդանսկ քաղաքում:

Առնվազն՝ բրոնզե մեդալ

Մեր ընդերներին երեկ հաստատ, որ Բուդապեշտում ընթացող բոքսֆամարտի աշխարհի 9-րդ առաջնությունում Հայաստանի հինգ մարզիկներ էին շարունակում պայքարը: Ավա՜ղ... ինչպես հայտնեցին ՀՀ սպորտվարչությունից, պարտություն կրելով, մրցումներից նախ դուրս մնաց 60 կգ քաշային Արսյոմ Սիմոնյանը, ապա քառորդ եզրափակիչում իրենց մենամարտերը տանուլ տվեցին եւ հետագա պայքարից դուրս մնացին Վախթանգ Դարչինյանը (51 կգ), Արթուր Գեւորգյանը (57 կգ) եւ Մխիթար Վալեսյանը (75 կգ): Մեր այս երեք բոքսֆամարտիկները աշխարհի առաջնությունում 51 կգ քաշային առաջնությունում 51 կգ քաշային ուսուցիչներ Իլֆաս Ռազյաքովի (աջից) եւ իտալացի Կարմինե Մոլարոյի մենամարտը: 9-5 հաշվով հաղթեց Ռազյաքովը



Աղասին եւ դասակարգման ցուցակը

Թենիսիստների համար ծանր մրցաշրջանը մոտեցել է ավարտին: Այժմ երկու խոշոր մրցումներ են անցկացվում Մեխիկոյում եւ Շտուտգարտում: Սակայն, ներկայացուցչական է վերջինը: այստեղ հանդես են գալիս աշխարհի ուժեղագույններից շատերը: Դրան համաքաղաքացիական է նաեւ մրցանակային հիմնադրամը՝ ավելի քան 2 միլիոն դոլար: Նշանակալից էր նաեւ Անդրե Աղասիի մասնակցությունը: Առաջին իսկ հանդիպման ժամանակ նա 4-6, 4-6 հաշվով պարտություն կրեց իր համերկրացի Թոդ Մարտինից, եւ նրա համար մրցաշարն ավարտվեց: Այս մրցաշրջանում Աղասին 12 հաղթանակ է տարել, պարտվել է 13 խաղում: Դրանցից 8-ը եղել են հենց առաջին շրջանում: Աղասին, որը ժամանակին գլխավորում էր աշխարհի ուժեղագույն թենիսիստների ցուցակը եւ երկար ժամանակ երկրագնդի ներկայիս թիվ 1 ռակետ Փիթ Սամփրասի գլխավոր մրցակիցն էր, այժմ համաշխարհային դասակարգման ցուցակում միայն 102-րդն է:

Մարտինի հետ հանդիպումից հետո մամուլի ասուլիսում Աղասին ասաց, որ եկող տարի այլ կերպ կլինի. ինքը կաշխատի լավագույն մարզավիճակում լինել եւ խաղալ այնպես, ինչպես իր լավագույն տարիներին:

Խիստ վտանգավոր մասնագիտություն

Որ ֆուտբոլի մրցավարի գործը շատ վտանգավոր է, վաղուց է հայտնի: Վերջին շրջանում Բուլղարիայի առաջնությունը սպասարկող մրցավարների վիճակն ավելի ծանրացավ. հայհոյանք-ները, սպառնալիքները չափազանց հաճախ էին դարձել, իսկ վայ-ֆուտբոլասերների մի մասն էլ սկսել էր բառացիորեն գրոհել նրանց վրա՝ թե խաղերի ժամանակ, թե խաղերից հետո: Եվ մրցավարների համբերության բաժակը լցվեց. նրանք գործադուլ հայտարարեցին՝ պահանջելով անվտանգություն ստադիոններում: Այդ առիթով բանակցություններ ընթացան որոշ առաջատար ակումբների, երկրի ֆուտբոլային միության եւ ոստիկանության ներկայացուցիչների հետ: Մրցավարներին խոստացան պաշտպանել մոլեգին՝ «ցավողներից»: Մրցավարներն էլ իրենց հերթին համաձայնվեցին դադարեցնել գործադուլը:

ԱԶԳ

Օրվա հետքով

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ

Լրագրողներին մեկուսարան չեն թողնում

Հոկտեմբերի 22-ին Երեւան ժամանած Եվրախորհրդի պատվիրակության առաքելությունը ձեւակերպված է հստակ. ծանոթանալ մարդու ազատությունների եւ իրավունքների ոլորտում հանրապետությունում առկա իրավիճակին, ինչպես նաեւ արձանագրել տվյալ բնագավառում նկատվող գործընթացները՝ հետագա վերլուծության եւ գնահատման համար: Այդ կապակցությամբ մշակված է բազմաբնույթ հանդիպումների եւ այցելությունների հարուստ ծրագիր՝ «իրազեկ» բոլոր կառույցների ընդգրկմամբ: Երեկ, հոկտեմբերի 23-ին պատվիրակությունը օրն սկսեց ՀՀ ԱԺ-ում. հանդիպումներ պատգամավորական առանձին խմբակցությունների (ԻՄ խմբակցություն, «Հայկոմկուս», «Շամիրամ», «Հանրապետություն» եւ այլն) եւ մշտական հանձնաժողովների ներկայացուցիչների հետ: Խորհրդարանի շենքում ծրագրված էր հանդիպում նաեւ ԱԺՄ խմբակցության հետ, որը սակայն կայանալու է մեկ այլ վայրում:

Հայտնի է, որ ԱԺՄ-ն բոյկոտում է ներկայիս խորհրդարանը եւ ոչ մի կուսակցական մուտք չի գործում Ազգ տարածք: Այլ հանդիպումների շարքում (Սահմանադրական դատարանի նախագահի հետ, ՀՀ փաստաբանների կոլեգիայում եւ այլն), ծրագրված էր նաեւ այցելություն որեւէ կալանավայր՝ գլխավորապես ճնշական մեկուսարան:

Այցը նախատեսված էր հոկտեմբերի 23-ին, ժամը 13:30-ին, նախօրոք հայտարարված էր լրագրողների ներկայության հնարավորության մասին:

Հայտնի է, որ մեր հանրապետությունը լրագրողի համար կան «փակ տարածքներ»: Լազավույն դեպքում մեծ դժվարությամբ է «չեզոք» լրագրողին հաջողվում ձեռք բերել իրեն հետաքրքրող տեղեկություն որոշ բնագավառների վերաբերյալ: Ուստի եւ պատահական չի կարելի համարել, հիշյալ խոստման առնչությամբ թղթակիցների ցուցաբերած պատրաստակամությունն ու հետաքրքրությունը: Եվրախորհրդի պատվիրակության հետ լինելը միջոց էր «արգելված գոտի» թափանցելու եւ տպավորությունները հայտնելու:

Այնուամենայնիվ, չգիտեմ ի՞նչ պատճառով եւ ո՞ւմ կամքով լրագրողական «ՌԱՖ»-ը Նուբարաշենի մեկուսարան ուղղվեց ավելի շուտ, փաստորեն առանձնացավ պատվիրակությունից եւ մեկուսարանի դարպասների մոտ «ներկայացավ» ընդամենը լրագրողական «դեսանտի» տեսքով: Եթե մի բան կարելի է ասել հաստատ, դա այն է, որ մեղքը վարորդինը չէր:

Մեկուսարանի շեմքին Ազ լրատվական ծառայության ղեկավար Վահագն Մկրտչյանի շուրթերով (նա ներսում բանակցում էր պաշտոնների հետ) լրագրողներին հայտարարվեց, որ ճնշական մեկուսարանում նկարահանելու թույլտվություն լիազորված է տալ միայն ՀՀ գլխավոր դատախազը:

Եվ քանի որ նման թույլտվություն չկա, ուրեմն՝ կներեք: Անհեթեթությունն այն է, որ ըստ տրամաբանության, նման պատասխանը հաստատվում է օրենսդրներին, բայց ոչ գրող լրագրողներին: Հարցը սպառվեց հետաքրքիր կերպով. գաղութում կարող եք լինել, բայց ճնշական մեկուսարանում նկարահանելու իրավունք չկա: Սակայն քանի որ պատվիրակությունը չի ուզում տեսնել գաղութը, այլ ցանկանում է ծանոթանալ մեկուսարանին, իսկ ձեզ այնտեղ նկարահանել չի թույլատրվում, ապա վերադառնանք Ազգային ժողով:

Հարցը սա է. եթե նախօրոք հաստատվել է լրագրողների մասնակցության մասին եւ նույնիսկ հաստատվել է համապատասխան փոխադրամիջոց, ապա ինչո՞ւ նախապես պայմանավորվածություն չի ձեռք բերվել մեկուսարանի վարչության հետ: Ինչո՞ւ են լրագրողները «առանձնացվել» պատվիրակությունից եւ ժամանման վայրում հայտնվել հիմարի կարգավիճակում: Վերջ ի վերջո, եթե մեր նորանկախ եւ ժողովրդավար երկրի շահերը չեն հանդուրժում կալանավայրում լրագրողի ներկայությունը, ապա ինչո՞ւ է արվել հիշյալ հայտարարությունը եւ ինչո՞ւ ենք մենք ընդհանրապես հայտնվել այնտեղ...

Այլ խոսքով, չեն հարգվել լրագրողի ազատությունը եւ իրավունքները:

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ

Կխնամեմ

Երեխա, 10 ամսականից բարձր հասակի:

Զանգահարել 248856, 553701:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՆ

Ընդունվում են ֆրանսերենից եւ ռուսերենից թարգմանության պատվերներ:

Զանգահարել 25 01 59
ժամը 9-10-ը եւ 18-22-ը

Առաջարկում եւ տեղադրում ենք

ցանկացած տեսակի ալեհավաքներ մետրային եւ դեցիմետրային ալիքների համար (TB, UI+, ACT, 4x4, HTB, St եւ այլն):

«Երաշխավորում ենք բարձր որակ»:

Հեռ. 63 13 95 (Առայիկ).
63 06 64 (Դավիթ)

Այս նկարից ձեզ ծանոթացող տղան ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ է:

Մոտ 1 ամիս հետո նա կդառնա 9 տարեկան: Ճակատագրի դառը հեգնանքով Հայկը 4 տարի տառապում է ծանր հիվանդությամբ: Տարեկան 2 վիրահատություն: 3-րդ վիրահատությունը կյանք է խոստանում, որը պետք է կատարվի Գերմանիայում:

Հայկն իր ծնողների միակ զավակն է, եւ ինչպես ամեն մի երեխա, նա էլ շատ երազանքներ ունի: Որպեսզի չընդհատվի նրա երազանքը, ու չմարի նրա ժպիտը, անհրաժեշտ են լուրջ միջոցներ:

Ովքեր կցանկանան օգնել Հայկին, նրան ծննդյան նվեր մատուցելով, թող իրենց հնարավորության սահմաններում գումար փոխանցեն հետեւյալ հաշվեհամարով.

Կարապետյան Նելլի (Հայկ)
Կոդ՝ 14500
Հ/Հ 7102653
«Միավորված բանկ» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայրենակիցներ,

հրավիրում ենք Ձեզ Արշակ Սադոյանի կողմից ղեկավարվող «Սոցիալական արդարություն» ժողովրդական շարժման հանրահավաքին, որը կկայանա հոկտեմբերի 24-ին, ժամը 16.30-ին, Ազատության հրապարակում: Հանրահավաքում կներկայացվեն հանրապետությունը սոցիալ-տնտեսական օրհասական վիճակից դուրս բերելու, Արցախի հիմնահարցի լուծման եւ իշխանության համակարգի վերափոխման անհրաժեշտության խնդիրները:

Նյու Վինդ

Սմիրյան 15 («Օրբիտա» խանութի շենքում)
Հեռ./ֆաքս 537703, 586604

Համակարգիչներ, կոնդիցիոներներ, աուդիո-վիդեո եւ կենցաղային տեխնիկա:

Գնացուցակին կարող եք ծանոթանալ «Ազգ» եւ «Օրենք» թերթերի շաբաթօրյա համարների 8-րդ էջում:

Job opportunities

Occasionally USAID/Caucasus, Yerevan Office may have temporary job opportunities for Drivers, operating private vehicles, Translators/Interpreters and Administrative Assistants.

Drivers: Qualifications: Must have valid Armenian licenses (B-C) for operating various types of vehicles. Minimum of one year prior driving experience, English language skills are desirable. Must own a good vehicle and must have proof of ownership on the vehicle.

Translators/Interpreters: Qualifications: Should be experienced in interpreting or translating professional, legal documents from English to Armenian and from Armenian to English.

Administrative Assistants: Qualifications: Should be fluent in English, Armenian and Russian. Should have experience in filing, scheduling, appointments, translating letters. Computer proficiency and typing skills are desirable, as well as experience in administrative type of work.

Interested candidates should submit their resumes to Mrs. Kim Tomsen, USAID/Caucasus, 16 Aigedzor St., Yerevan, tel.: 26-34-97.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ հատուկ դասընթացների բաժինը

հրավիրում է

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

Ծանոթություն DOS, NORTON COMMANDER, WINDOWS համակարգչային միջավայրերին
1997 թ. նոյեմբերի 10-ին եւ 13-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

WORD 6.0 FOR WINDOWS, առաջին փուլ
1997 թ. նոյեմբերի 17-ին եւ 20-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

WORD 6.0 FOR WINDOWS, երկրորդ փուլ
1997 թ. նոյեմբերի 24-ին եւ 26-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

EXCEL 5.0 FOR WINDOWS, առաջին փուլ
1997 թ. դեկտեմբերի 1-ին եւ 4-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

EXCEL 5.0 FOR WINDOWS, երկրորդ փուլ
1997 թ. դեկտեմբերի 8-ին եւ 11-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

ACCESS 2.0 FOR WINDOWS, առաջին փուլ
1997 թ. դեկտեմբերի 15-ին եւ 18-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

ACCESS 2.0 FOR WINDOWS, երկրորդ փուլ
1997 թ. դեկտեմբերի 22-ին եւ 23-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 18 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

INTERNET-ի դասընթաց
1998 թ. հունվարի 8-ին, 9-ին, 12-ին եւ 15-ին
Ժամը՝ 16:00-20:15
Վարձը՝ 25 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ

- Դասընթացները կընթանան հայերեն լեզվով:
- Դասընթացները տեղի կունենան Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ):
- Վճարման եւ գրանցման համար դիմել ՀԱՀ-ի 19ա սենյակ:
- Յուրաքանչյուր դասընթացում կընդգրկվեն առաջին 15 գրանցվածները:
- Այն դիմորդները, ովքեր միանգամից կգրանցվեն չորս եւ ավելի փուլերի, կվճարեն 10 տոկոս զեղչ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58

Ազատ ճիտքում

Ձեր քաջը կլինի այնքան, ինչքան որ Դուք եք ցանկանում: Խորհրդակցություն փորձառու մասնագետի հետ: Հեռ. 58-40-94 Զանգահարել ժամը 9-12, 20-22

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում 40 քմ ընդհանուր մակերեսով, բնակելի մակերեսը՝ 24 քմ:

Հասցեն՝ Կոմիտաս 36, բն. 32. Հեռ. 22-47-51

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ է

կահույք (փղոսկրյա գույնի, գերմանական, ննջարանի, լավ վիճակում):

Զանգահարել 52-91-36, 58-24-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

4 սենյականոց բնակարան

(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4).

Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան Կոմիտաս փողոցում, 5 հարկանի շենքի 5-րդ հարկում (Արաբկիր հանրախանութի շենքում):

Զանգահարել 23-34-35

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Սոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոտնակ, մուտքը առանձին: Հասցեն՝ Զրաբաս 68 (ՊԱ հետեւի մասում):

Հեռախոս 52-54-39:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www/arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 691. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության՝ 23.10.1997. Գինը 100 դրամ